ՀՀ ԿԳՄՍ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

2023-2028ԹԹ.

ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ «ՇԱՏԻՆԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

1) ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ. ՈՒԺԵՂ և ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ

1.1 Հաստատության շենքային պայմանների վերլուծություն

1.2 Հաստատության նյութատեխնիկական բազայի վերլուծություն

1.3 Հաստատության կառավարման մարմնի և տնօրենի համագործակցության վերլուծություն

1.4 Հաստատության համագործակցությունը տեղական ինքնակառավարման մարմինների, ծնողական համայնքի,կրթության կառավարման մարմինների, շահառու կազմակերպությունների հետ

1.5 Մանկավարժական համակազմի մասնագիտական որակների ներկայացումը

1.6 Օգտագործվող ՏՀՏ և կրթական այլ տեխնոլոգիաների եվ նորոարարությունների ներկայացումը

1.7 Չափորոշչային պահանջներին համապատասխան կրթության որակի վերլուծությունը

1.8 Բազմակարծիք, ներառական և մասնակցային արժեքային միջավայրի վերլուծությունը

1.9 Աշխատակազմի արժևորման, խրախուսման և ինքնակրթության հնարավորությունների վերլուծությունը

2) ՆՊԱՏԱԿՆԵՐԻ և ԽՆԴԻՐՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄԸ

2.1 Զարգացման ծրագրի նպատակը ,խնդիրները

2.2 Զարգացման ծրագրի ակնկալվող արդյունքները

2.3 Զարգացման ծրագրի ֆինանսավորման աղբյուրները

3) ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

3.1 Կրթական կարիքների նկարագրությունը

3.2 Համապատասխանությունը պետության կրթական քաղաքականության միտումներին

3.3Համապատասխանությունը հաստատության ենթակառուցվածքների հնարավորություններին, մարդկային ռեսուրսներին և ներուժին

4) ՍԱՀՄԱՆՎԱԾ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԿԱՏԱՐՈՂՆԵՐԸ, ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ, ԱՆՀՐԱԺԵՇՏ ՄԻՋՈՑՆԵՐՆ ՈՒ ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲԱԶԱՆ

5) ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ ԵՎ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ

6) ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՌԻՍԿԵՐՆ ՈՒ ԴՐԱՆՑ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵ

ՆԱԽԱԲԱՆ

Մեր բարոյական պարտականությունն է յուրաքանչյուր երեխային հնարավոր լավագույն կրթություն տալը:
ԴԵՄՄՈՆԴ ԹՈՒԹՈՒ

ՀՀ Վայոց ձորի մարզի «ՇԱՏԻՆԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-ի 2023-2028թթ դպրոցի զարգացման ծրագրում ներկայացված է կրթական գործընթացի արդի պահանջներին համապատասխան դպրոցի զարգացման տեսլականը:

Ուստի անհրաժեշտություն է առաջանում պլանավորել դպրոցի զարգացման ծրագիրը առաջիկա հինգ տարիների կտրվածքով՝ հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ դպրոցի հիմնական առաքելությունը ոչ միայն շրջանավարտներին որակյալ կրթություն և մասնագիտական կողմնորոշում ապահովելն է, այլ քաղաքացիական հասարակությանը պիտանի, դաստիարակված անձնավորություն տալը:

Այսօր, արդեն կրթության ոլորտում տեղի են ունենում այնպիսի փոփոխություններ, որոնցից անհնար է անմասն մնալ և հաշվի չառնել դրանք որակյալ կրթական միջավայր ստեղծելու ճանապարհին:

Կրթական ժամանակակից տեխնոլոգիաների ներդրման և արդյունավետ մեթոդաբանության կիրառման միջոցով պետության, հասարակության և անհատի զարգացման առաջնահերթություններից բխող որակյալ կրթության և դաստիարակության ապահովմանը նպատակաուղղված համակողմանիորեն զարգացած արժեհամակարգ ունեցող անհատի կամ քաղաքացու ձևավորումը:

ՀՀ Վայոց ձորի մարզի «ՇԱՏԻՆԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-ի 2023-2028 թվականների զարգացման ծրագիրը մշակվել է «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 30-

րդ հոդվածի 1-ին մասի 26.8-րդ կետի պահանջի համաձայն՝ հիմք ընդունելով ոլորտը կարգավորող նորմատիվ իրավական ակտերն ու օրենքները, ինչպես նաև ուղղորդվելով ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2022թ. սեպտեմբերի 27-ի N35-Ն հրամանով հաստատված «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության զարգացման ծրագրի մշակման պահանջներն ու ձևաչափը» փաստաթղթով:

Դպրոցի զարգացման ծրագիրը դպրոցի վարած քաղաքականության հիմքն է: Զարգացման ծրագիրը դպրոցի այսօրվա և վաղվա ուղեցույցն է, ապագայի տեսլականը: Այն պլանավորված գործողությունների և ներդրումների համախումբ է, որն ուղղված է որոշակի ժամանակահատվածում նախանշված նպատակների և խնդիրների իրագործմանը: Դպրոցն առաջնորդվում է իր զարգացման հեռանկարային ծրագրով և աշխատում է այնպես, որ հնարավորինս արդյունավետ և ժամանակին իրականացվեն նախատեսված աշխատանքներն ու միջոցառումները՝

- *Ակադեմիական գերազանցություն.* Բարելավել ընդհանուր ակադեմիական կատարողականը՝ սահմանելով սովորողների նվաճումների մակարդակը, խթանելով արդյունավետ դասավանդման ռազմավարությունների ներդրմանը բարելավել և ուսումնական ծրագրերի լրամշակումն ու իրականացումը:
- *Սովորողների բարեկեցություն* և անձնական զարգացում. ստեղծել դրական և աջակցող ուսումնական միջավայր, որն առաջնահերթություն է տալիս սովորողների ֆիզիկական, սոցիալական և հուզական բարեկեցությանը:
. բարձրացնել ուսուցիչների և անձնակազմի մասնագիտական աճն ու կարողությունները
:

Ծնողների և համայնքի ներգրավվածություն. ամրապնդել դպրոցի, ծնողների և ավելի լայն համայնքի միջև համագործակցությունը: Խրախուսել շահառուների ներգրավվածությունը դպրոցական գործունեության մեջ, ստեղծել արդյունավետ հաղորդակցման ուղիներ և հնարավորություններ ընձեռել ծնողներին ու համայնքի անդամներին՝ նպաստելու դպրոցի զարգացմանը:



ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Կրթական կարիքների նկարագրությունը

Դպրոցի կրթական կարիքների գնահատումը ներառում է ստորև ներկայացվող հիմնական ուղղությունները (որոնք նպաստում են կրթության արդյունավետ մատուցմանը և սովորողների համակողմանի զարգացմանը).

Ուսումնական ծրագրերի որակական գնահատում լավ մշակված և համակողմանի ուսումնական ծրագրեր, որոնք համապատասխանում են կրթական չափորոշիչներին և բավարարում է սովորողների ուսուցման բազմազան կարիքները:

Ուսուցման գործընթացի կազմակերպման արդյունավետության գնահատում. արհեստավարժ ուսուցիչների ներգրավվածությամբ արդյունավետ ուսուցման ռազմավարությունների կիրառում, ովքեր տրամադրում են սովորողներին տարբերակված աջակցություն անհատական ուսումնական նպատակներին հասնելու համար:

Ռեսուրսների գնահատում (այդ թվում մարդկային). արդիական, նպատակային ռեսուրսների օգտագործման գնահատում՝ մանկավարժական և վարչական աշխատողների պաշտոնային պարտականությունների կատարման գործընթացում (դասագրքերը, տեխնոլոգիաները, լաբորատոր սարքավորումները, ուսումնական նյութերը և այլ ռեսուրսներ)

Ենթակառուցվածքների գնահատում, համապատասխան ֆիզիկական

ենթակառուցվածքների, ներառյալ դասարաններ, գրադարաններ, ուսումնական լաբորատորիաներ, համակարգչային լաբորատորիաներ, խաղահրապարակներ և այլ հարմարությունների առկայություն ու կիրառականություն՝ նպաստավոր ուսումնական ֆիզիկական միջավայր ստեղծելու համար
Տեխնոլոգիաների ինտեգրման գնահատում համապատասխան ռազմավարությունների կիրառում տեխնոլոգիական գործիքների և ռեսուրսների հասանելիություն, որոնք նպաստում են թվային գրագիտության, մեդիագրագիտության զարգացմանը, ընդլայնում են ուսումնադաստիարակչական գործընթացի կազմակերպման փորձառությունը ու խթանում արդիական պահանջարկային կրթության կազմակերպմանը
Կրթական այլ ծառայությունների կազմակերպման գնահատում օժանդակ կրթական ծառայությունների տրամադրում, ինչպիսիք են արտադասարանական աշխատանքներ, արտադպրոցական գործունեություն, երկարօրյա ուսացում, որոնք ուղղված են սովորողների տարբեր կարողունակությունների զարգացմանը (ակադեմիական, սոցիալական և այլ)
Ելնելով վերոգրյալից նշենք, հաստատության կողմից շահառուների կրթական կարիքների բավարարման նպատակով իրականացվող պետական ծրագրերի կազմակերպման գործընթացի բաղադրիչները առանձին ուղղություններով:

Ուսումնական հաստատության կառավարում

1. Դպրոցը տվյալ համայնքի կրթադաստիարակչական ակտիվ կենտրոն դարձնելու նպատակով հաստատության ռազմավարական կառավարում, ղեկավարում առաջնորդում ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան և դպրոցի զարգացման ծրագրի տեղականով
2. Դպրոցում կազմակերպվող աշխատանքներն առավել մրցունակ, նպատակային և հասցեական դարձնելու նպատակով համագործակցությունների՝ այդ թվում միջազգային (դպրոց-գերատեսչություն, դպրոց-համայնք, դպրոց-բուն, դպրոց-մշակութային հաստատություններ, դպրոց-դպրոց և այլն) կառավարում, ղեկավարում և առաջնորդում
3. Դպրոցում կրթադաստիարակչական ծառայությունների մատուցման որակական աճի նապատակով հատատության ռեսուրսների (մարդկային,

ժամանակի, փոփոխությունների, կոնֆլիկտների, ուսումնադիդակտիկ, նյութատեխնիկական, ֆինանսական) ռազմավարական կառավարում, ղեկավարում և առաջնորդում
4. Դպրոցում կրթադաստիարակչական ծառայությունների մատուցման որակական աճի նպատակով հաստատությունում գործող խորհրդակցական մարմինների, կազմակերպվող աշխատանքների վերահսկողության ու հաշվետվողականության ռազմավարական կառավարում . ղեկավարում և առաջնորդում
5. Դպրոցում կրթադաստիարակչական ծառայությունների մատուցման որակական աճի և մանկավարժական առաջավոր փորձի ուսումնասիրման ու ներդրման նպատակով գիտամակավարժական, մանկավարժամեթոդական գործունեության ռազմավարական կառավարում
Ուսումնադաստիարակչական աշխատանքների կազմակերպում
1. Հանրակրթության պետական չափորոշչի պահանջներին համապատասխան սովորողի ուսուցումն ու դաստիարակությունը կազմակերպելու նպատակով հանրակրթական պետական ծրագրերի իրականացում դաս-դաստանային մոտեցումով նպատակային արդիական մանկավարժական ռազմավարություններով
2. Հանրակրթության պետական չափորոշչի պահանջներին համապատասխան սովորողի ուսուցումն ու դաստիարակությունը կազմակերպելու նպատակով՝ արտադասարանական աշխատանքների (ուսումնական նախագծերի և ուսումնական խմբակների) կազմակերպում նպատակային արդիական մանկավարժական ռազմավարություններով
3. Հանրակրթության պետական չափորոշչի պահանջներին համապատասխան սովորողի ուսուցումն ու դաստիարակությունը կազմակերպելու նպատակով արտադպրոցական աշխատանքների կազմակերպում նպատակային արդիական մանկավարժական ռազմավարություններով
4. Սովորողների հանգստի և ժամանցի, ինչպես նաև հանրակրթական պետական ծրագրերի արդյունավետ իրականացման նպատակով երկարօրյա խմբերում աշխատանքի կազմակերպում նպատակային արդիական մանկավարժական ռազմավարություններով
5. Յուրաքանչյուր սովորողի համար՝ անկախ կրթության առանաձնահատուկ պայմանների կարիքներից, ազգությունից, մշակութային բազմազանությունից այլ առանձնահատկություններից

կրության հավասար իրավունքով համընդհանուր ներառական կրթության կազմակերպում նպատակային արդիական մանկավարժական ռազմավարություններով
6. Արդիական կրթական ծրագրերի ներդրում, որոնք համապատասխանում են հանրակրթության պետական չափորոշչի պահանջներին և նպաստում են սովորողներիրում, ղեկավարում և աջնորդում

Վարչատնտեսական գործունեություն

1. Հաստատության գործունեության արդյունավետության բարձացման նպատակով հաստատության վարչատնտեսական աշխատանքերի կազմակերպման համալիր ռազմավարական կառավարում, ղեկավարում և առաջնորդում
2. Ուումնական ֆիզիկական միջավայրի լիարժեք կիրառականությունն ապահովվելու նպատակով ենթակառուցվածքների համալրում, բարեկարգում և արդիականացում 3. Ուումնական ֆիզիկական միջավայրի լիարժեք կիրառականությունն ապահովվելու նպատակով որակյալ ուսումնական նյութերի համալրում, լրամշակում և արդիականացում
4. Հաստատության գործունեության արդյունավետության բարձացման նպատակով աշխատողների աշխատանքի գնահատման խրախուսման ռազմավարական համակարգերի ներդրում և կառավարում
5. Ֆինանսական ռեսուրսների արդյունավետ նպատակային կառավարում
6. Այլընտրանքային (հաստատության կանոնադրությամբ սահմանված և օրենքով չարգելված գործունեության ձևերով, միջոցներով) ֆինանսական ռեսուրսների ներգրավման գործընթացի ռազմավարական կառավարում, ղեկավարում և առաջնորդում

1.ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ. ՈՒԺԵՂ և ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ

Դպրոցի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և վտանգների (ՈՒԹՀՎ) վերլուծություն

ՈՒԹՀՎ վերլուծություն	
ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ	ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ
Աշխատակազմ • *Դպրոցի տնօրինությունն ունի դպրոցի*	Աշխատակազմ • *Թույլ սովորողների խրախուսման և*

ղեկավարման և կառավարման անհրաժեշտ պատրաստվածություն, տիրապետում է դպրոցի ուսումնադաստիարակչական, ֆինանսատնտեսական և կառավարման ոլորտների ղեկավարման առանձնահատկություններին: • *Դպրոցը համագործակցում է համայնքի հետ:* • *Դպրոցը ուսումնադաստիարակչական հարցերում փորձում է ապահովել աշակերտակենտրոն մոտեցում՝ ներդաշնակորեն համադրելով ուսուցման ավանդական և արդիական մեթոդների կիրառումը:* • *Ուսումնաօժանդակ կազմը պարտաճանաչ և պատասխանատու ձևով կատարում է իր պարտականությունները:* • *Ուսուցիչներն ունեն անհրաժեշտ պատրաստվածություն, մասնագիտական զարգացման անհրաժեշտ կարողություններ:* • *Տարվա ընթացքում կազմակերպում են այցելություններ ՀՀ պատմա-մշակութային հուշարձաններ, թանգարաններ* • *Սերնդեսերունդ փոխանցվող հայ դպրոցի ավանդույթներ:* • *մասնագիտական զարգացման անհրաժեշտ կարողություններ:* • *Համագործակցություն այլ դպրոցների հետ՝ հատկապես քույր դպրոց Ռինդի հետ:*	*ակտիվացման մեթոդների ոչ արդյունավետ կիրառումը:* • *Կան ուսուցիչներ ովքեր դեռ հրահանգողի դերում են, որը սահմանափակում է սովորողի ազատ մտածելու հնարավորությունը:* • *Տարակարգ ունեցող ուսուցիչների բացակայություն* • *Ուսուցիչների զգալի մասը չի կիրառում նոր տեխնոլոգիաներ: Անհրաժեշտ է վարպետորեն համադրել ուսուցման մեթոդներն ու հնարները, օրինակելի և ուսանելի դաս կազմակերպելու համար:* • *Դպրոցում ստեղծել պայմաններ երեխայի ֆիզիկական, հոգևոր կարիքների համակողմանի զարգացման համար:* • *Առարկայական մրցույթ-վիկտորինաների, միջոցառումների սակավություն:* • *Ռազմահայրենասիրական դաստիարակությանը նպաստող: ա/պետական և ազգային տոնների նշում բ/համագործակցություն զորամասերի հետ,հանդիպումներ ազգային հերոսների,սպաների,պատերազմի մասնակիցների և զինվորների հետ:*
Սովորողներ • *Ակտիվացել են աշակերտների հետաքրքրությունները*	**Սովորողներ** • *Որոշ աշակերտների անտարբերությունը ուսման նկատմամբ*

օլիմպիադաների, հանրապետական մրցույթների նկատմամբ <<Կենգուրու>>, <<Մեղու>> • *Բարձրացել է սովորողների պատասխանատվության զգացումը* • *ԲՈՒՀ–ում սովորելու ցանկություն ունեցող աշակերտների տոկոսը բարձր է*	• *Սոցիալապես անապահով ընտանիքների երեխաները հաճախակի բացակայում են դասերից* • *Աշակերտների ինքնագնահատման օբյեկտիվությունը* • *Օլիմպիադաներում մարզային,Հանրապետական առարկայական հաղթանակների ցուցանիշի բարելավում* • *Մրցակցություն ոչ թե գիտելիքի, այլ գնահատականի համար* • *Աշակերտական խորհրդի աշխատանքների ակտիվացում*
Կառավարման և խորհրդակցական մարմիններ • *Դպրոցում գործում են կանոնադրության համաձայն ձևավորված խորհուրդներ՝ կառավարման, մանկավարժական, ծնողական, աշակերտական, որոնք կանոնավոր գումարում են նիստեր և կազմակերպում աշխատանքները* • *Դպրոցը համագործակցում է ծնողների հետ, գործուն մասնակցություն ունի համայնքի հիմնախնդիրների լուծմանը՝ աշակերտներին ներգրավելով այդ գործընթացում, որպես կամավորներ* • *Մեծ ակտիվությամբ գործում է աշակերտական ինքնավարության մարմինը՝ աշակերտական խորհուրդը*	**Կառավարման և խորհրդակցական մարմիններ** • *ԱԽ-ն չի համագործակցում հասարակական կազմակերպությունների հետ* • *Անհրաժեշտ է ստեղծել կայք, որտեղ կտեղադրվեն իրականացված բոլոր ուսումնադաստիարակչական միջոցառումները* • *Դպրոցը չունի հոգաբարձուների խորհուրդ* • Պասիվ համագործակցություն հասարակական կազմակերպությունների հետ • Համագործակցություն դոնոր ծրագրերի,հովանավորների,գյուղաբնակ,սակայն ՌԴ ապրող բարերար գործարարների հետ:
Դպրոցի շենքային պայմանները և նյութատեխնիկական բազան • Տարածքի ընդարձակությունը,դասասենյակների	

մեծությունը և լուսավորվածությունը,կահավորվածություն • *Դպրոցի բոլոր դասասենյակները կահավորված են գույքով:* • *Դպրոցն ունի համակարգչային կաբինետ, ինտերնետ կապ:* • *Ունի Արմատ ինժեներական լաբորատերիա* **Հաղորդակցություն, համագործակցություն** • *Դասավանդման ընթացքում ուսուցիչներն աշակերտների միջև ստեղծում են փոխհամագործակցության կապեր* • *Համագործակցություն այլ դպրոցների հետ* • *Իրականացնել դպրոց-ընտանիք փոխհամագործակցությունն ամրապնդող միջոցառումներ* • *Ամել է համագործակցումն ուսուցիչների միջև:* **Բյուջե, ֆինանսներ** • *Կայուն պետական ֆինանսավորում* • *Ֆինանսների ճիշտ և գրագետ բաշխում*	**Դպրոցի շենքային պայմանները և նյութատեխնիկական բազան** • *Դպրոցի ցանկապատը նորոգման կարիք ունի* • *Ուսումնանյութական բազայի անհամապատասխանությունը ժամանակակից պահանջներին* • *Լաբորատորիան չունի ժամանակակից և նոր սարքավորումներ, նյութեր* • *Դպրոցը չունի հրաձգարան* • *Նոր համակարգիչների ձեռքբերում* • *Առարկայական կաբինետների նյութատեխնիկական բազան հին է* • *Վերանորոգման կարիք ունի ջեռուցման համակարգը:* • *Գլխավոր մասնաշենքը նորոգման կարիք ունի* **Հաղորդակցություն, համագործակցություն** • Քիչ են համացանցում տեղակայված նյութերը: • Դպրոցը չի համագործակցում այլ մարզերի դպրոցների հետ **Բյուջե, ֆինանսներ** *Արտաբյուջետային միջոցներ*
Հնարավորություններ • *Մանկավարժության ժամանակակից պահանջներին համապատասխան կրթական որակի ապահովում* • *Պետական չափորոշիչներին*	**Վտանգներ** • *Երկրի սոցիալ-տնտեսական վիճակը* • *Սոցիալական վատ պայմանները* • *Սովորողների թվի տարեց տարի*

համապատասխան հմտությունների, կարողությունների, արժեքային համակարգի ձևավորում • *Կրթության որակի բարձրացումը* • *ՏՀՏ-ի կիրառումը դասի ընթացքում* • *Աշխատանքային կարգապահության բարձրացումը*	*նվազումը* • *Պատերազմական իրավիճակ*

1.1 ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՇԵՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Դպրոցի հիմնադիրը Հայաստանի Հանրապետությունն է՝ ի դեմս կառավարության:

- *Դպրոցը հանդիսանում է << Վայոց Ձորի մարզի Շատինի միջն. դպրոցի>> ՊՈԱԿ՝ պետռեգիստրի վկայականը տրված 22.01.65.210.00432 N03 Ա058355 ներդիրներ 001,002,003 և հարկային կոդը 08903519:*
- *Ուսումնական հաստատությունը գործունեության ընթացքում ղեկավարվում է ՀՀ օրենսդրությամբ և դպրոցի կանոնադրությամբ՝ հաստատված պետռեգիստրի կողմից 09.10.2017 թիվ 68 որոշմամբ:*
- *Դպրոցի գտնվելու վայրն է՝ՀՀ Վայոց Ձորի մարզ գ._Շատին,հեռ. 028199417:*

  Դպրոցի կայքը՝ www.shatin.schoolsite.am
- *«Վայոց Ձորի մարզի Շատինի միջն. դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունը/այսուհետ դպրոց/շահույթ ստանալու նպատակ չհետապնդող,իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող,հանրակրթական հիմնական ընդհանուր և ավագ դպրոցի ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություն է:*
- *2014 թվականից դպրոցում գործում է նախակրթարան, 2015թվականից իրականցնում է ներառական կրթություն, 2016թվականից դպրոցում իրականացվում է ինժեներական կրթություն՝գործում է «Արմատ» ինժեներական լաբորատորիա:*

  Դպրոցն իրավունք ունի իրականացնել հետևյալ ծրագրերը՝

  տարրական հանրակրթական

•հիմնական հանրակրթական

•միջնակարգ հանրակրթակ

Դպրոցի ներկայիս շենքը կառուցվել է 1972 թվականին,բաղկացած է 2 մասնաշենքերից: Գլխավոր մասնաշենքը եռահարկ է , իսկ մյուսը՝ մեկ հարկանի:

Հիմանորոգվել է 2007-2008թթ:

Դպրոցում այժմ սովորում է 184 աշակերտ, որից 91-ը տղա, իսկ 93-ը աղջիկ: Գործում են թվով 12 դասարաններ, որից 4-ը տարրական, 5-ը հիմնական, 3-ը ավագ աստիճաններում:

Դպրոցում առկա են ինֆորմատիկայի, ռազմագիտության կաբինետներ: Դպրոցն ունի համակարգչային սենյակ, գրադարան: Դպրոցում այս պահին գործում է 18 դասասենյակ, կա 2 վարչական, 1 լաբորատորիա, օտար լեզվի առարկայական սենյակ, պահակակետ, արհեստանոց, 5 սանհանգույց:

Աշխատում են 42 աշխատակիցներ, որից 29-ը մանկավարժներ են, 2-ը վարչական, իսկ 11-ը ուսումնաօժանդակ:

Դպրոցում աշխատում են 12 դասղեկ-դասվարներ, գործում են 4 մեթոդական միավորումներ, մանկավարժական խորհրդի անդամների թիվը 29 է, աշակերտական խորհրդի անդամների թիվը 14, ծնողական խորհրդի անդամների թիվը 12, կառավարման խորհրդի անդամների թիվը 19:

Դպրոցն աշխատում է մեկ հերթով, հնգօրյա աշխատանքային ռեժիմով, դպրոցի շրջանավարտների մեծ մասն ուսումը շարունակում են բարձրագույն ուսումնական հաստատությունններում:

Դպրոցը կարիք ունի մասնակի վերանորոգման՝ թեքահարթակներ, սանհանգույցներ և ճաշարանի կառուցում, որը պետք է իրագործել առաջիկայում, ուսումնական հաստատության շենքային պայմանների բարելավումը առաջնային խնդիր է: Դպրոցում ուսուցանվող օտար լեզուն անգլերենն է:

Դպրոցում ՏՄԱԿ-ի կողմից գնահատվել են 3 ԿԱՊԿՈՒ աշակերտ : Դպրոցը 2021թ. ուսումնական տարվա սկզբից անցնել է ընդհանուր ներառման:

Ուսումնական գործընթացը կազմակերպելիս դպրոցը հիմնվում է հանրակրթական պետական չափորոշչի և պետական ծրագրերի վրա:

Դպրոցում առկա է պարտադիր գործածության երաշխավորված փաստաթղթերը, և դրանք վարվում են կարգերի պահանջներին համապատասխան: ՀՀ կրթության և գիտության մշակույթի և սպորտի նախարարության կողմից հաստատված է Հայաստանի Հանրապետության հանրակրթական ուսումնական հաստատություններում գործածության ենթակա փաստաթղթերի անվանացանկը:

1.Աշակերտի անձնական գործ

2.Աշակերտական շարժի մատյան

3.Վկայականների բաշխման մատյան

4.Աշխատողների հրամանագիրք

5.Աշակերտների հրամանագիրք

6.Աշխատողի անձնական գործ

7.Դպրոցի կառավարման խորհրդի արձանագրությունների մատյան

8.Մանկավարժական խորհրդի արձանագրությունների մատյան

9.Առարկայական մեթոդական միավորման արձանագրությունների մատյան

10.Տարիֆիկացիոն ձևաթղթերի մատյան

11.Ուսուցչի բաց թողած և փոխարինած ժամերի հաշվառման մատյան

12.Սովորողի տեղափոխման թերթիկ-կատարվում է emis.am –ով

13.Աշակերտական խորհրդի արձանագրությունների մատյան

Դպրոցական շենքի պայմանները, ուժեղ և թույլ կողմերը վերլուծելը շատ կարևոր է բարելավում պահանջող ոլորտները բացահայտելու և առկա ակտիվները օգտագործելու համար: Դպրոցի շենքային պայմանների վերլուծության շրջանակը ներկայացվում է ստորև՝

ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ	ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ

• *Տարածքի ընդարձակությունը,դասասենյակների մեծությունը և լուսավորվածությունը, կահավորվածություն*
• *Դպրոցն ունի համակարգչային կաբինետ, ինտերնետ կապ:*
• *Ունի Արմատ ինժեներական լաբորատերիա*
1. Հաստատության շենքը վերանորոգված է մասնակի
2. Հաստատությունում սովորողների թիվը նախագծային հզորությանը և լիցենզիայով
3. Հաստատության համապատասխանում է հաստատության հաստատության սահմանված սահմանային տեղերին շենքը կայուն է վտանգների ազդեցությանը՝ ուժեղ քամիներ, սողանքներ, երկրաշարժեր, հրդեհներ, խոնավություն և այլն
4. Հաստատության շենքի շահագործումը համապատասխանում է շահագործման
	• *Դպրոցի ցանկապատը նորոգման կարիք ունի*
	  • *Ուսումնանյութական բազայի անհամապատասխանությունը ժամանակակից պահանջներին*
	• *Լաբորատորիան չունի ժամանակակից և նոր սարքավորումներ, նյութեր*
	• *Դպրոցը չունի հրաձգարան*
	• *Նոր համակարգիչների ձեռքբերում*
	• *Առարկայական կաբինետների նյութատեխնիկական բազան հին է*
	  • *Վերանորոգման կարիք ունի ջեռուցման համակարգը:*
	  • *Գլխավոր մասնաշենքը նորոգման կարիք ունի*

անվտանգության նորմերին 5. Շենքում առկա են դեպի դուրս բացվող պահուստային ելքեր	

1.2 ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲԱԶԱՅԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Դպրոցի նյութատեխնիկական բազայի բարելավման նպատակով անհրաժեշտ է մշտապես համագործակցել առանձին կառույցների և նրանց ներկայացուցիչների հետ: Գտնել հովանավորներ, բարերարներ, ստեղծել հոգաբարձուների խորհուրդ լրացուցիչ միջոցներ ձեռքբերելու նպատակով:

ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ	ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ
Շատինի միջնակարգ դպրոցի հանդիսությունների սրահն ու սպորտդահլիճը հիմնանորոգման փուլում են: Շինարարական աշխատանքներն իրականացնում T-CONSTRUCTION կազմակերպությունը,որը աշխատանքները սկսել է 2022թ թվականի ապրիլի 25-ից:	• *Նյութատեխնիկական բազայի հարստացման կարիք* • *Լաբորատոր սարքավորումների ձեռքբերման կարիք* • *Ուսումնանյութական բազայի հարստացման կարիք* • *Համակարգչային կաբինետը նոր համակարգիչներով,տեխնիկայով հագրման կարիք* • *Սպորտգույքի ձեռքբերման կարիք* • *Հանդիսությունների դահլիճի գույքի ձեռքբերման կարիք*



2013

1.3 ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄՆԻ ԵՎ ՏՆՕՐԵՆԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Կառավարման խորհրդի և հաստատության տնօրենի համագործակցությունը վճռորոշ է արդյունավետ կառավարման և հաջող գործունեության համար: Այս համագործակցությունը երաշխավորում է, որ հաստատությունն առաջնորդվի ընդհանուր տեսլականով, ռազմավարական ուղղորդմամբ և ուժեղ առաջնորդությամբ:



Հաստատության կոեգիալ կառավարման մարմնի նիստերն արձանագրվում են: Վերլուծելով նիստերի գումարման հաճախականությունը և քանակը վերջին 5 տարիների ընթացքում, կարելի է նշել, որ խորհուրդը միջին հաշվարկով գումարում է տարեկան 5

նիստ:

Խորհուրդն իր աշխատանքներն իրականացնում է համագործակցային փոխըմբռնման գործելաոճով: Գումարված նիստերի արդյունքում կայացրած որոշումները կատարվում են ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան: Խորհրդի աշխատանքները Կազմակերպում է խորհրդի նախագահը , խորհրդի մնացած անդամների և հաստատության տնօրենի աջակցությամբ: Գումարված նիստերն արձանագրվում են կառավարման խորհրդի քարտուղարի կողմից:

Կառավարման խորհրդի գործունեությունը հիմնականում կազմակերպվել է հետևյալ աշխատանքների միջոցով,

• Աջակցել է ուսումնական հաստատության զարգացման ծրագրի կատարմանը, վերահսկել է զարգացման ծրագրի ժամանակացույցով սահմանված տարեկան գործողությունների իրականացումը, լսել է զարգացման ծրագրի կատարման ամենամյա հաշվետվությունը և տվել եզրակացություն

Հաստատել է դպրոցի կազմակերպական կառուցվածքը, ներքին կարգապահական, այդ թվում՝ աշխատողների և սովորողների վարքագծի կանոններ

Դպրոցում կառավարման որակին ուղղված գործունեությունը պետք է հիմնվի մասնակցային սկբունքների վրա:Այդ նպատակով պետք է խթանել դպրոցի կառավարման և խորհրդակցական մարմինների աշխատանքը. դրա ոչ միայն աջակցողները, այլև մասնակցայի կրթության սկզբունքի համաձայն անմիջական մասնակիցը պետք է լինեն դպրոցում կրթական գործընթացի մասնակիցները՝ սովորողը, սովորողի ծնողը, ուսուցիչը և մանկավարժական այլ աշխատողներ: Հաստատության մանկավարժական խորհրդի կազմակերպվել է հետևյալ աշխատանքների միջոցով, գործունեությունը հիմնականում

• Մանկավարժական խորհուրդը կազմավորվում է մանկավարժական համակազմի օգոստոսյան առաջին նիստում, ձևավորվում է տնօրենի հրամանով մեկ ուսումնական տարի ժամկետով

• Դպրոցի բոլոր մանկավարժական աշխատողները մանկավարժական խորհրդի անդամ

են

Մանկավարժական խորհուրդը քննարկել է հանրակրթության պետական չափորոշչի պահանջների համաձայն՝ հանրակրթական հիմնական ծրագրերի իրագործման հարցերը՝ սովորողների նախասիրություններին ընդունակություններին համապատասխան, ապահովելով նրանց կյանքի և առողջության պահպանումը

Մանկավարժական խորհուրդը քննարկել է սովորողի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատման համար մանկավարժահոգեբանական աջակցության տարածքային կենտրոն դիմելու հարցը ծնողի դիմումի համաձայն

Մանկավարժական խորհուրդը քննարկել է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողի անհատական ուսուցման պլանը և սովորողին տրամադրվող մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունները

Մանկավարժական խորհուրդը քննարկել է ուսուցման բովանդակության, սովորողների ուսումնառության արտադատարանական որակի, նրանց աշխատանքների կազմակերպման, խմբակների, երկարօրյա խմբերի ստեղծման հարցերը: Մանկավարժական խորհուրդը որոշումներ է ընդունել հաստատության ուսումնական պլանի դպրոցական բաղադրիչի ժամաքանակի բաշխման մասին և այն ներկայացրել է տնօրենին՝ հաստատման մասին:

Հաստատությունում գործում են մեթոդական միավորումներ որոնք 4-ն են՝ դասվարական, հումանիտար, բնագիտական, օտար լեզուների, որոնցից յուրաքանչյուրի աշխատանքը կազմակերպվում է տվյալ մեթոդմիավորման նախագահի և անդամների համագործակցությամբ: Վերլուծելով նիստերի գումարման հաճախականությունը և քանակը վերջին 5 տարիների ընթացքում, կարելի է նշել որ ամեն մեթոդմիավորում միջին հաշվարկով գումարում է տարեկան 11 նիստեր (հերթական և արտահերթ): Մեթոդ միավորումների աշխատանքները կազմակերպվում են մեթոդմիավորման նախագահի տարեկան աշխատանքային պլանով , որը ուսումնական տարվա սկզբին հավանության է արժանանում մանկավարժական խորհրդի կողմից և գործածության մեջ է դրվում հաստատության տնօրենի հերթական հրամանով: Հաստատությունում կիսամյակային

պարբերականությամբ կատարվում է մեթոդական միավորումների կողմից կազմակերպված աշխատանքների հաշվետվողականություն:

Հաստատության ծնողական խորհրդի աշխատանքները կազմակերպվում են ծնողական ժողովների միջոցով՝ համաձայն դպրոցի ուսումնադաստիարակչական տարեկան պլանի, հրավիրվում են դասարանական ժողովներ՝ առնվազն չորս անգամ, համադպրոցական ժողովներ՝ առնվազն երկու անգամ: Գումարված նիստերի արդյունքում կայացրած որոշումները կատարվում են ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան՝ հաշվի առնելով աշխատողի պաշտոնային պարտականությունները և աշխատանքնային պայմանագրով սահմանված աշխատանքի ուղղությունները: Ծնողական խորհրդի աշխատանքը վերահսկում է հաստատության տնօրենի դաստիրակչական աշխատանքների գծով տեղակալը: Գումարված նիստերն արձանագրվում են ծնողական խորհրդի քարտուղարի կողմից:

Դպրոցի աշակերտական խորհրդի աշխատանքները ևս կազմակերպվում են նիստերի ջոցով: Այն սովորողների ինքնավարության և ինքնակառավարման լիազորություններով օժտված ներկայացուցչական մարմինն սովորողական խորհուրդն է, որը ստեղծվում է ժողովրդավարության և ինքնավարության սկզբունքներին համապատասխան: Վերլուծելով նիստերի գումարման աճախականությունը և քանակը վերջին 5 տարիների ընթացքում, կարելի է նշել որ խորհուրդը իջին հաշվարկով գումարում է տարեկան 2-4 նիստեր՝ խորհրդի աշխատանքային պլանին Համապատասխան: Աշակերտական խորհրդի աշխատանքը վերահսկում է հաստատության դաստիրակչական աշխատանքների գծով տեղակալը:

ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ

Այսօր կարևոր և դրական լծակ է հոգաբարձուների խորհուրդը: Դպրոցի մի շարք խնդիրների և կազմակերպչական հարցերի լուծման նպատակով , զարգացման ծրագրերին աջակցելու և համայնքի հետ արդյունավետ համագործակցություն ապահովելու համար մեծ դեր ունի հոգաբարձուների խորհուրդի ձևավորումը:

Անհրաժեշտ է ձևավորել դպրոցի հոգաբարձուների խորհուրդ, խորհրդի կազմում ընդգրկել դպրոցի գործունեությամբ շահագրգիռ անձանց, անհատ ձեռներեցների, տեղական իշխանության ներկայացուցիչների: Անհրաժեշտ է նրանց ներգրավել մի շարք ֆինանսական միջոցների հայթայթմանը, նյութատեխնիկական բազայի ամրապնդմանը, արտաբյուջետային ֆոնդի ձևավորմանը:

Հոգաբարձուների նպատակը պետք է լինի օժանդակ միջոցներով ներդրումներ և նվիրատվություններ ներգրավել անհատներից, դպրոցի շրջանավարտներից և կամավոր ֆինանսավորողներից:

ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ	ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ
• Կառավարման խորհրդի անդամների կողմից իրենց լիազորությունների շրջանակներում ակտիվ համագործակցություն: • Խորհրդի անդամները իրենց գործունեությունը իրականացնում են հանուն դպրոցի զարգացման: • Մասնակցային սկզբունքի հիման վրա դպրոցի կառավարում և համագործակցություն: • Մանկավարժական խորհուրդը իր լիազորությունների շրջանակներում կազմակերպում և իրականացնում է համապատասխան գործունեություն:	• Որոշ խնդիրների լուծման համար ոչ բավարար ռեսուրսների առկայություն: • Ժամանակային ռեսուրսների բացակայության պայմաններում ակտիվ և պարբերաբար գործունեություն ծավալելու հնարավորությունների սահմանափակում:

1.4 ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ, ԾՆՈՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ, ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ, ՇԱՀԱՌՈՒ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ

Դպրոցի և տարբեր շահագրգիռ կողմերի, այդ թվում՝ տեղական ինքնակառավարման մարմինների, ծնողական համայնքի, կրթության կառավարման մարմինների և շահառու կազմակերպությունների միջև համագործակցությունը կենսական դեր է խաղում աջակցող և հարստացնող կրթական միջավայր ստեղծելու գործում:

Ստորև ներկայացված են «ՀՀ Վայոց ձորի մարզի Շատինի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի և տեղական ինքնակառավարման մարմինների, ծնողական համայնքի, կրթության կառավարման մարմինների, շահառու կազմակերպությունների հետ համագործակցության ուժեղ և թույլ կողմերը

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
1. Համայնքի ներգրավվածություն. ծնողական խթանում է ակտիվ ներգրավվածությունը, մասնակցությունը և համատեղ պատասխանատվությունը սովորողների կրթության և բարեկեցության համար՝ ստեղծելով համայնքի ավելի ուժեղ աջակցություն դպրոցում 2. Կրթության կառավարման մարմնի և շահառու կազմակերպությունների հետ համագործակցությունը արձանագրված փորձ է, ուղեցույց և լավագույն գործունեության հնարավորություն կրթադաստիարակչական աշխատանքները և քաղաքականությունը բարելավելու ուղղություններով:	1. Ռեսուրսների փոխանակման և աջակցության բացակայություն տեղական ինքնակառավարման մարմինների, կրթության կառավարման մարմնի և շահառու կազմակերպությունների հետ ոչ համակողմանի համագործակցությունը (հաագործակցության բացակայությունը) խափանում է լրացուցիչ ռեսուրսների, ֆինանսավորման, փորձաքննության և դպրոցի ծրագրերի և նախաձեռնությունների համար աջակցությունը 2. Դպրոցի և շահագրգիռ կողմերի միջև հաղորդակցության սահմանափակության խաթարվում է հաստատության կամ բացակայության պատճառով նպատակային գործունեությունը

1.5.Մանկավարժական համակազմի մասնագիտական որակների ներկայացումը.

Դպրոցի մանկավարժական անձնակազմի մասնագիտական որակները վճռորոշ դեր են խաղում դրական ուսումնական միջավայրի ստեղծման և սովորողների ակադեմիական և անհատական զարգացման գործում:

Ստորև ներկայացված են «ՀՀ Վայոց ձորի մարզի Շատինի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի մանկավարժական համակազմի մասնագիտական որակների ուժեղ և թույլ կողմերը:

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
1.Մանկավարժական համակազմը հիմնականում ունի ակադեմիական կարողություններ համապատասխան և փորձ առարկայական ոլորտներում, ինչը	1. Ուսուցիչները կարող են չունենալ բավարար մշակութային իրավասություն՝ անդրադառնալու սովորողների տարբեր մշակութային ծագմանը և փորձին, ինչը

հնարավորություն է տալիս կազմակերպել ուսումնադաստիարակչական գործընթաց և ուղղորդել սովորողներին 2. Ուսուցիչները հիմնականում կարողանում են իրականացնել դասերի պլանավորում, ուսուցում, դասարանի կառավարում և ուսումնառության գնահատում 3. Մանկավարժական համակազմը ըստ թվային ցուցանիշների ներգրավված է շարունակական զարգացման մասնագիտական միջոցառումներում	կարող է հանգեցնել ներառական և մշակութային արձագանքող ուսումնական միջավայրեր ստեղծելու հնարավոր մարտահրավերների 2. Որոշ ուսուցիչներ սահմանափակում են թվային գործիքների և ռեսուրսների օգտագործումը 3. Չնայած ուսուցումը տարբերակելու ջանքերին, որոշ ուսուցիչներ կարող են բախվել բոլոր սովորողների անհատական ուսուցման կարիքները արդյունավետորեն բավարարելու դժվարությունների հետ, ինչը հանգեցնում է ակադեմիական առաջադիմության և ներգրավվածության անկման (սովորողների թիվը սահմանաչափով նախատեսվածից ավելին լինելու պատճառով)



	Ազգանուն,անուն	Կրթությունը	Ծննդյան թիվ	Մասնագիտություն	Դասավանդող առարկան
1	*Բաբայան Գոհար*	Բ	1984	ՀՊՄՀ ,Հայոց լեզու և գրակ.	Տնօրենի ժ/պ
2	*Հովհաննիսյան Արա*	Բ	1967	ԵՊՃՇԻ, Շինարար Ճարտ.	Տ.Տեղակալ ՈՒԱ

3	*Մաթևոսյան Մելիք*	Բ	1957	ԵՊԳԻ, Մեխանիկ ինժիներ	ՆԶՊ
4	*Առաքելյան Ռուզաննա*	Բ	1967	Հյս.Համալսարան,Հոգեբան	Հոգեբան
5	*Խաչատրյան Աշոտ*	Բ	1994	ՀՊՄՀ, Ինֆորամիկա	ԴԱԿ,Տեխնոլոգիա
6	*Պապլոյան Գյուլնազ*	Բ	1969	ԻՄԻ,Տարրական կրթ.,	Մանկ. օգն.
7	*Հայրապետյան Քնարիկ*	Բ	1953	ԵՊՄՀ, Տարրական կրթ.,	Մանկ.օգն.,երգ
8	*Սմբատյան Անի*	Բ	1989	ՀՊՄՀ , Ինֆորմ., Տնտես.	Ուսուցիչ, ինֆորմ.
9	*Գրիգորյան Սյուզաննա*	Բ	1987	Եր. ՄԽԱՀ, Բանասեր	Ուսուցիչ, հ.լ. և գրակ.
10	*Աբրահամյան Նունեն*	Բ	1966	ՀՊՄՀ, Ռ.լեզու	Ուսուցիչ, ռ.լեզու
11	*Խաչատրյան Լիանա*	Բ	1984	Հյս.Համալս.,Անգլերեն	Ուսուցիչ,անգլերեն
12	*Բաբաջանյան Թեհմինե*	Բ	1990	Հյս.Համալս.Անգլերեն	Ուսուցիչ,անգլերեն
13	*Մեղրակյան Հրանդուխտ*	Բ	1955	ԵՊՄՀ,Մաթեմ.	Ուսուցիչ, մաթեմ.
14	*Հովհաննիսյան Մարինե*	Բ	1968	ԵՊՄՀ,պատմ. Իրավագ.	Ուսուցիչ,պատմ.,հասարակ.
15	*Հարությունյան Հայկուշ*	Բ	1953	Գորիսի Պ.Մ.Ի., ֆիզիկա	Ուսուցիչ, ֆիզիկա
16	*Մարկոսյան Մարիամ*	Բ	1992	ՀՊՄՀ, ֆիզիկա	Ուսուցիչ, բնագետ
17	*Մարկոսյան Մարինե*	Բ	1989	ՀՊՄՀ, քիմիա	Ուսուցիչ, քիմիա
18	*Խուդոյան Արման*	Բ	1979	ՀՖԿՍՊԻ, ֆիզ.դաս.ևսպ.	Ուսուցիչ,ֆիզկուլտ
19	*Հարությունյան Նազիկ*	ՄՄ	1955	Գորիսի ՊՄՈՒ, դասվար	Ուսուցիչ, դասվար
20	*Հարությունյան Աղավնի*	Բ	1958	ԵՊԳԻ, տնտես	Ուսուցիչ, դասվար
21	*Եղոյան Գայանե*	Բ	1970	ՀՊՄՀ, դասվար	Ուսուցիչ, դասվար
22	*Պետրոսյան Մերի*	Բ	1992	ՀՊՄՀ, Հ.լ. և գր.	Ուսուցիչ,մայր.,հ.լ. և գր.
23	*Մարգարյան Բաբիկ*	Բ	1956	Եր. Պ.Մ.Ի.,Ֆիզիկ, տեխ.	Ուսուցիչ, շախմատ
24	*Հովակիմյան Շուշանիկ*	Բ	1984	ԵՊՄՀ, իրավագետ	Ուսուցիչ, ՀԵՊ,պատմ.,հաս.
25	*Թափուր*	-	-	-	-
26	*Թափուր*	-	-	-	-
27	*Մարտիրոսյան Նորայր*	Բ	1985	ՀՊՄՀ,աշխարհ.	Ուսուցիչ, աշխարհ.
28	*Մաթևոսյան Տաթևիկ*	Բ	1988	ՀՊՄՀ,ինֆորմատիկա	Ուսուցիչ,Ազգ.երգ,պար
29	*Բաբլանյան Աննա*	Բ	1978	Հյս.Համալ.,տարր. կրթ.	Ուսուցիչ, դասվար
30	*Աբրահամյան Մարիամ*	Բ	1995	ԵՊՀ, մաթեմ,	Ուսուցիչ,մաթեմ

1.6 ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՏՀՏ ԵՎ ԿՐԹԱԿԱՆ ԱՅԼ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԵՎ ՆՈՐՈՒՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ

Կրթության որակի բարձրացման համար կատարվել է և կատարվում են բազմաթիվ կազմակերպչական, ուսումնական, ռազմահայրենասիրական, դաստիարակչական բնույթի միջոցառումներ, սակայն այս հիմնախնդրի լուծման համար անհրաժեշտ է նաև՝

- Հարստացնել առկա ուսումնա-մեթոդական բազան: Ձեռք բերել ձեռնարկներ, մեթոդական ուղեցույցեր, գեղարվեստական, գիտական գրքեր, ատլասներ, քարտեզներ
- Մեծ ուշադրություն դարձնել պրակտիկ ունակությունների զարգացմանը, հմտությունների մշակմանը, սովորողների ֆիզիկական և ռազմահայրենասիրական դաստիարակությանը
- Լայնորեն կիրառել դասաժամի արդյունավետությունը բարձրացնող միջոցներ՝ ուսումնադիդակտիկ պարագաներ, սլայդներ, տեսաժապավեններ, պլակատներ, աղյուսակներ, գործիքներ, նյութեր
- Կիրառել իրավիճակային խնդիրներ, թեստեր, դերային խաղեր, խաչբառեր, խաճանկարներ, ինտերակտիվ ուսուցման մեթոդներ, ստուգատես մրցույթներ և այլ մեթոդներ.
- Համալրել համակարգչային դասարաններ, ստեղծել ժամանակակից տեխնիկական միջոցներով հագեցած կաբինետներ,
- Մանկավարժական կազմի դասավանդման որակը բարձրացնելու նպատակով պարբերաբար կազմակերպել վերապատրաստումներ, դասախոսություններ, հարցազրույցներ, կոնֆերանսներ, ուսուցողական և բաց դասեր, կատարել դասալսումներ, մեծ ուշադրություն դարձնել դասավանդողների գնահատման ընթացակարգի կիրառմանը:

1.7 ՉԱՓՈՐՈՇՉԱՅԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

Այսօր արդեն հասարակության պահանջն է կրթել և դաստիարակել ոչ միայն գիտելիքներով հարուստ և զինված հասարակության անդամներ, այլ նաև վերառարկայական կարողունակություններ ունեցողների: Այժմ դպրոցը պետք է ձևավորի այնպիսի սովորողների, ովքեր օժտված կլինեն մի շարք որակներ, արժեհամակարգով, որոնք կկարողանան կիրառել հետագայում կյանքի տարբեր փուլերում և իրավիճակներում: Այդ պատասխանատու գործում ուսումնական հաստատությունը պետք է առաջնորդվի չափորոշչահեն կրթություն իրականացնելու սկզբունքով: Մասնավորապես՝

1. *Ստեղծել ուսումնական այնպիսի պայմաններ, որոնք կնպաստեն սովորողների ուսումնական գործընթաի արդյունավետությանը:*
2. *Բոլոր բաղադրիչները՝գիտելիքներ, կարողություններ, հմտություններ և արժեքային համակարգ , պետք է լինեն ուսումնական գործընթացի անբաժան մասը:*
3. *Անհատական մոտեցման սկզբունքի հիման վրա, ապահովել սովորողներից յուրաքանչյուրի կրթական պահանջները:*
4. *Սովորողների կարողություններին աճին համապատասխան կրթական նոր պահանջների առաջադրում, զարգացնող ուսուցման կազմակերպում.*
5. *Ուսուցման և դաստիարակության գործընթացում սովորողի անձնական կենսափորձը հաշվի առնելը.*
6. *Միջառարկայական կապերի ստեղծմանն ուղղված տարբեր հնարների ու միջոցների կիրառում.*
7. *Սովորողների և ուսումնական գործընթացի շարունակական ու տարաբնույթ գնահատում:*

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
1. Դպրոցի ուսումնական պլանը մշակված և գործածության է դրված չափորոշիչների պահանջներին համապատասխան 2. Դպրոցում կազմակերպվող հանրակրթական ծրագրերի իրականացման դասարան) և այլ արդյունավետությունը գնահատվում է հիմնականում կրթության պետական կառավարման մարմնի սահմանված կարգով իրականացված ամփոփիչ ստուգումների (4-րդ ավարտական քննությունների (9-րդ դասարան), արտադպրոցական ստուգատեսների արդյունքների միջոցով	1.Դպրոցը չի կիրառում ոսումնառության արդյունավետության գնահատման համակարգ 2. Դպրոցում ներդրված չէ ուսուցիչներին մասնագիտական շարունակական զարգացման հնարավորություններ՝ նրանց մասնագիտական կարիքի գնահատման միջոցով

1.8 ԲԱԶՄԱԿԱՐԾԻՔ, ՆԵՐԱՌԱԿԱՆ և ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԱՐԺԵՔԱՅԻՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

Յուրաքանչյուր երեխայի ներառական կրթության համար, այդ թվում՝ ԿԱՊԿՈՒ երեխաների համար կրթական որակյալ և արդյունավետ միջավայրի ապահովումը պարտադիր պայման է: Այդ պայմանները պետք է լինեն ոչ միայն ուսումնական գործընթացում , այլ նաև շրջակա միջավայրի և շենքային պայմանների ձևով: ԿԱՊԿՈՒ յուրաքանչյուր սովորողի ուսուցման կազմակերպման ռազմավարության կազմակերպման ելակետային դրույթերից մեկն այն է, որ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներն իրավունք ունեն օգտվելու հատուկ մանկավարժական, առողջապահական, հոգեբանական, սոցիալական և այլ ծառայություններից՝ անկախ նրանց ընտրած ուսումնական հաստատության տիպից:

Դպրոցում սովորում են ԿԱՊԿՈՒ երեխաներ, սակայն շենքային պայմանները ոչ բավարար ձևով են հարմարեցված այդ սովորողների համար:

Դպրոցում կառավարման որակին ուղղված գործունեությունը պետք է հիմնվի մասնակցային սկբունքների վրա:Այդ նպատակով պետք է խթանել դպրոցի կառավարման և խորհրդակցական մարմինների աշխատանքը. դրա ոչ միայն աջակցողները, այլև մասնակցայի կրթության սկզբունքի համաձայն անմիջական մասնակիցը պետք է լինեն դպրոցում կրթական գործընթացի մասնակիցները՝ սովորողը, սովորողի ծնողը, ուսուցիչը և մանկավարժական այլ աշխատողներ: Դպրոցում բազմակարծիք, ներառական, մասնակցային և արժեքների վրա հիմնված կրթական միջավայրի վերլուծությունը ներառում է բազմազանության, ներառականության, ակտիվ

մասնակցության և արժեքների մշակման խթանմանն ուղղված միջոցառումների որակական և քանակական գնահատումը:
Ստորև ներկայացված են «ՀՀ Վայոց ձորի մարզի Շատինի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի բազմակարծիք, ներառական, մասնակցային արժեքային միջավայրի ուժեղ և թույլ կողմերը.

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
1. Դպրոցը պաշտոնապես ընդունում է բոլոր շահագրգիռ կողմերի մասնակցությունը (սովորողներ, ծնողներ, ուսուցիչներ և տեղական համայնք) որոշումների կայացման գործընթացներին՝ պատասխանատվության դպրոցի կառավարմանը և կրթական գործունեությանը՝ խթանելով սեփականության և համատեղ պատասխանատվության զգացումը 2. Դպրոցը կարևորում է բարոյական և էթիկական արժեքների զարգացումը, սոցիալական պատասխանատվությունը՝ սովորողների մեջ սերմանելով ազնվության, կարեկցանքի, հարգանքի և ամուր հիմքեր	1.Դպրոցը ունի թույլ կողմեր բոլոր սովորողների համար ռեսուրսների, հնարավորությունների և կրթական աջակցության լիարժեք և համակողմանի հասանելիության ապահովման հարցում (սովորողների թվաքանակի աճով պայմանավորված) 2. Ուսուցիչներին մասնագիտական հնարավորություններ ընձեռելիս հաճախ հաշվի չեն առնվում կարողունակությունների բազմակարծության, ներառական li արժեհամակարգային կրթության հետ:

1.9 ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՐԺԵՎՈՐՄԱՆ, ԽՐԱԽՈՒՄՄԱՆ ԵՎ ԻՆՔՆԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

Շատինի մինջակարգ դպրոցի ուսուցիչները մասնակցել են 2022-2023թթ. Ուսումնական տարվա պարտադիր վերապատրաստումներին՝ 16 ուսուցիչ:
Բոլոր ուսուցիչները մասնակցում են ՀՊՉ-ի վերաբերյալ իրականացվող վերապատրաստումներին: Կամավոր ատեստացիային մասնակցել է մեկ ուսուցիչ:

«Հանրապետության հանրակրթական դպրոցների 2-րդ, 5-րդ և 7-րդ դասարանների Հանրակրթության պետական չափորոշչի և առարկայական ծրագրերի վերապատրաստվող ուսուցիչներ»

N	Վերապատրաստված ուսուցչի Անուն,ազգանուն,հայրանուն
1	Բաբայան Գոհար
2	Խաչատրյան Աշոտ
3	Մաթևոսյան Մելիք
4	Պետրոսյան Մերի
5	Աբրահամյան Նունե
6	Խաչատրյան Լիանա
7	Բաբագյուլյան Թեհմինե
8	Սեդրակյան Հրանդուխտ
9	Հովհաննիսյան Մարինե
10	Հովակիմյան Շուշանիկ
11	Մարտիրոսյան Նորայր
12	Հարությունյան Հայկուշ
13	Մարկոսյան Մարինե
14	Մարկոսյան Մարիամ
15	Խուդոյան Արման
16	Հարությունյան Նազիկ
17	Բաբլանյան Աննա
18	Մարգարյան Բաբիկ
19	Հայրապետյան Քնարիկ
20	Մափևոսյան Տաթև

Պարտադիր ատեստացիայի վերապատրաստվածների ցուցակ

N		Անուն , Ազգանուն
1	2020-2021	Սյուզի Գրիգորյան
2		Նորայր Մարտիրոսյան
3		Անի Սմբատյան
4	2021-2022	Գայանե Եղոյան
5		Մարինե Հովհաննիսյան
6	2022-2023	Մերի Պետրոսյան
7		Նունե Աբրահամյան
8		Լիանա Խաչատրյան
9		Թեհմինե Բաբագյուլյան
10		Հրանդուխտ Սեդրակյան
11		Մարինե Հովհաննիսյան
12		Մարինե Մարկոսյան
13		Մարիամ Մարկոսյան
14		Աղավնի Հարությունյան
15		Աննա Բաբլանյան
16		Բաբիկ Մարգարյան
17		Վինետա Բաբգյուլյան
18		Ռուզաննա Առաքելյան

1.10.Ուսումնական նպատակով կատարված ծախսերի վերլուծությունը, դրանց արդյունավետության ցուցանիշների, շեղումների և պլանավորման խնդիրների տեսանկյունից

Դպրոցում կրթական ծախսերի վերլուծությունը ներառում է դրանց արդյունավետության ցուցանիշների գնահատում, պլանավորված բյուջեից շեղումների հայտնաբերում և պլանավորման ցանկացած խնդիրների գնահատում:

Ստորև ներկայացված են «ՀՀ Վայոց ձորի մարզի Շատինի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի ուսումնական նպատակով կատարված ծախսերի վերլուծությունը, դրանց արդյունավետության ցուցանիշների, շեղումների և պլանավոման ուժեղ և թույլ կողմերը:

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
1. Դպրոցը պլանավորում է բյուջեն՝ հաշվի առնելով՝ անձնակազմի կարիքները, հաստատության ուսումնական պլանը, ռեսուրսները, ենթակառուցվածքների պահպանումը և սովորողների կարիքները 2. Դպրոցի ծախսերը կառավարելի են և հիմնականում հատկացվում են	1. Դպրոցում ներդրված չէ ռեսուրսների արդյունավետության օպտիմալացման համակարգ 2. Դպրոցում ներդրված չէ կրթական ծախսերի գնահատման համակարգ 3. Դպրոցի բյուջեի շեղումներ արձանագրված են՝ ներկայացված

այն ոլորտներին, որոնք մեծ ազդեցություն ունեն սովորողների ուսման և զարգացման վրա 3. Դպրոցը պարբերաբար հրապարակում է ֆինանսական հաշվետվությունները իր պաշտոնական կայքում	փաստաթղթերում 4. Դպրոցի ֆինանսավորումը կատարվում է հիմնականում պետական բյուջեից 5. Դպրոցում ներդրված չէ ֆինանսական ռեսուրսների կառավարման համակարգ

Հավելված N 1
ՀՀ N 1
Հայաստանի Հանրապետության
ֆինանսների նախարարի
<<04>> 02 2012թ. N104 -Ն հրամանի

ԾՐԱԳՐԱՅԻՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ, ՎԵՐՋԱԲԵՐՅԱԼ
01. 01. 2023թ. -- 31. 12 . 2023թ. ժամանակահատվածի համար

Պետական կառավարման լիազորված մարմնի անվանումը Վայոց Ձորի մարզպետարան
Համակարգի բոլոր ՊՈՒԿ-ների գծով ամփոփ Ցնդգծել¤

Պետական ոչ առևտրային կազմակերպության անվանումը

	Ցուցանիշների անվանումը	Հաշվետու ժամանակաշրջանի հիմնական ծրագրային ցուցանիշները (տարեսկզբից աճողական)			
		I եռամսյակի հաշվետված ծրագրային ցուցանիշը	I կիսամյակի հաշվետված ծրագրային ցուցանիշը	Իննամսյա հաշվետված ծրագրային ցուցանիշը	Տարեկան հաշվետված ծրագրային ցուցանիշը
1	***Դրամական միջոցների տարեսկզբի (հաշվետու ժամանակաշրջանի սկզբի) մնացորդը***	1830,5	1830,5	1830,5	1830,5
2	**ԸՆԴԱՄԵՆԸ Գ ո ր ծ ա ռ ն ա կ ա ն ե կ ա մ ու տ ն ե ր**	12155,10	29712,20	46754,7	60345,20
	այդ թվում				
2,1	ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՄԱՏԿԱՐԱՐՈՒՄԻՑ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՈՒՄԻՑ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից				**515,6**
2,2	ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՄԱՏԿԱՐԱՐՈՒՄԻՑ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՈՒՄԻՑ Այլ աղբյուրներից ստացվող եկամուտներ				1780,5
2,3	ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐԻ ՁԵՎՈՎ ՍՏԱՑՎՈՂ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ	**424,7**	**955,5**	**1486,3**	**2055,8**
2,4	ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ ՍՏԱՑՎՈՂ ՍՈՒԲՍԻԴԻԱՆԵՐ	11730,4	28756,7	45268,4	55993,3
2,5	ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ				
3	**ԸՆԴԱՄԵՆԸ Գ ո ր ծ ա ռ ն ա կ ա ն ծ ա խ ս ե ր**	13985,6	31542,7	48585,2	62175,7
3,1	ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԴՐԱՆ ՀԱՎԱՍԱՐԵՑՎԱԾ ՎՃԱՐՈՒՄՆԵՐ	**12178,8**	**27445**	**42783,7**	**54492,4**
3,2	ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՁԵՌՔ ԲԵՐՄԱՆ ԴԻՄԱՑ ՎՃԱՐՈՒՄՆԵՐ	**1776,8**	**3517,7**	**5201,5**	**6972,6**
3,3	ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ ԵՎ ԱՅԼ ՏՐԱՆՍՖԵՐՏՆԵՐ				
3,4	ԱՅԼ ԾԱԽՍԵՐ	**30,0**	**130,0**	**150,0**	**260,7**
3,5	ԿԱՊԻՏԱԼ ԾԱԽՍԵՐ		**450,0**	**450,0**	**450,0**
4	***Դրամական միջոցների տարեվերջի (հաշվետու ժամանակաշրջանի վերջի) մնացորդը (տող 1 + տող 2-տող 2)***	**0,0**	**0,0**	**0,0**	**0,0**

2.ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄԸ

2.1 Զարգացման ծրագրի նպատակներն ու խնդիրները սահմանվում են իրավիճակի վերլուծության և հիմնախնդիրների բացահայտման գործընթացի արդյունքում:

Նպատակը ցանկալի և նախապես կանխատեսելի վերջնական արդյունքն է:

Առանձնացվում են նպատակներին և խնդիրներին ներկայացվող հետևյալ պահանջները.

- նպատակը պետք է լինի կոնկրետ և չափելի: Չնայած հիմնականում նպատակը ձևակերպվում է որակական առումով, սակայն վերջնական արդյունքները պետք է արտահայտված լինեն քանակական տվյալներով,
- նպատակը ժամանակային առումով պետք է լինի որոշակի. յուրաքանչյուր նպատակ սահմանվում է որոշակի ժամանակահատվածի համար,
- նպատակը պետք է իրատեսական և հասանելի լինի, այն պետք է սահմանվի՝ հաշվի առնելով դպրոցի իրական հնարավորությունները,
- նպատակները պետք է լինեն փոխհամաձայնեցված, չպետք է հակասեն իրար: Դրանք պետք է լրացնեն միմյանց և նպատակաուղղված լինեն դպրոցի տեսլականի իրականացմանը,
- նպատակը պետք է լինի ճկուն: Քանի որ արտաքին պայմանները արագ են փոփոխվում, և շատ դեպքերում հնարավոր չէ կանխատեսել դրանք, ուստի արտաքին և ներքին գործոնների փոփոխություններին համընթաց ուսումնական հաստատության նպատակները պետք է պարբերաբար վերանայվեն:
- յուրաքանչյուր նպատակի իրականացման համար պետք է սահմանվեն որոշակի

խնդիրներ,

- յուրաքանչյուր խնդրի իրականացման համար անհրաժեշտ է մշակել համապատասխան գործողությունները և ակնկալվող արդյունքները՝ նշելով դրանց պատասխանատուները (կատարողները), ժամկետները և իրականացման համար անհրաժեշտ նյութատեխնիկական միջոցները,
- սահմանված գործողությունները պետք է նպատակաուղղված լինեն տվյալ խնդրի

լուծմանը և ձևակերպված լինեն հստակ, առանց երկիմաստության. տվյալ գործողության արդյունքը պետք է հնարավոր լինի ճշգրիտ չափել,

- ակնկալվող արդյունքները պետք է լինեն արտահայտված կոնկրետ ցուցանիշներով

(թվեր, տոկոսներ, բնութագրիչներ) և հստակ ընկալելի լինեն տվյալ գործողությունն իրականացնող պատասխանատուների և կատարողների համար:

Նպատակների մի մասը սահմանվում են՝ ելնելով դպրոցի առկա հիմնախնդիրներից: Սակայն դրանք կարող են պայմանավորված լինել նաև տվյալ դպրոցի առաքելությունից

բխող նորարական նախաձեռնություններով:

Կարևոր է Զարգացման ծրագրում հստակ ձևակերպել լուծում պահանջող խնդիրները և դրանք ներկայացնել որպես ցանկալիի և իրականի հակադրություն: Իրավիճակի գնահատականը վերհանելու համար անհրաժեշտ է կազմակերպել իրականի հետազոտություն և վերլուծություն, անցկացնել ուսումնասիրություն և բացահայտել խնդիրը:
Այս գործընթացում աշխատանքները կարելի է պլանավորել և՛ իրավիճակի գնահատականից, և՛ նպատակների հստակ սահմանումից:

Դպրոցի զարգացման ծրագիրն ուղղված է առաջիկա հինգ տարում դպրոցի բնականոն և արդյունավետ գործունեության ապահովմանը, դպրոցում կրթության որակի, գիտելիքի վարկանիշի բարձրացմանը, կրթական ծրագրերի իրականացմանը, դպրոցի առջև ծառացած հիմնախնդիրների աստիճանական լուծմանը, ժամանակակից մարտահրավերներին արձագանքելուն, կրթօջախի առաջընթացին՝ առաջնորդվելով հանրակրթության վերաբերյալ ՀՀ օրենսդրության, ենթաօրենսդրական ակտերի, ՀՀ կառավարության որոշումների պահանջներով:

Ծրագրի ռազմավարական գլխավոր ուղղությունը ներդաշնակորեն զարգացած, սոցիալապես գործուն և ստեղծագործ, հայրենասիրության, պետականության և մարդասիրության ոգով դաստիարակված անձի ձևավորմանը միտված կրթության համակարգի առաջանցիկ զարգացումն է՝ որպես պետականության ամրապնդման և հասարակության սոցիալ-տնտեսական առաջընթացի գործոն:

Իրավիճակի վերլուծությունը հնարավորություն է տալիս սահմանել զարգացման ծրագրի նպատակները: Նպատակը որոշակի ժամանակահատվածում իրականացվող գործունեության սպասվող արդյունք է, այն է ինչին ձգտելու ենք հասնել:

- ✓ Ծրագրի նպատակները՝
- ✓ *Փորձառու մասնագետներ ,նորարար և ստեղծագործ ուսուցիչներ*
- ✓ *Դպրոցի գործունեությունը կանոնակարգող նորմատիվային փաստաթղթերի փաթեթի ստեղծում*
- ✓ *Դպրոցի նյութատեխնիկական բազայի հարստացում*
- ✓ *Դպրոցի կաբինետների, լաբորատորիաների կահավորում*

- ✓ *Ժամանակակից կրթական պահանջներին բավարարող ուսումնական միջավայրի ապահովում*
- ✓ *Կրթության որակի ներքին գնահատման համակարգի կատարելագործում*
- ✓ *Սովորողների կրթության կառուցվածքի և բովանդակության վերազինում*
- ✓ *Սովորողների գործնական հմտությունների զարգացմանն ուղղված ուսուցման ժամանակակից մեթոդների ներդրում*
- ✓ *Սովորողների հոգևոր և մտավոր ներուժի ամրապնդում,ազգային և համամարդկային արժեքների պահպանում և զարգացում*
- ✓ *Սովորողների մասնագիտական կողմնորոշման և հետագա կրթության համար անհրաժեշտ նախադրյալների ձևավորում*
- ✓ *Աշակերտական ինքնակառավարման մարմինների գործունեության կատարելագործում*
- ✓ *Սովորողների առողջության պահպանմանն ուղղված ուսումնադաստիարակչական աշխատանքների կատարելագործում*
- ✓ *Դպրոց-ծնող-համայնք կապերի ամրապնդում*
- ✓ *Ուսումնական գործընթացում տեղեկատվական և հաղորդակցական ժամանակակից տեխնոլոգիաների օգտագործման արդյունավետության բարձրացում*
- ✓ *ՏՀՏ կիրառումը դասապրոցեսում՝ ուսման որակի բարձրացման նպատակով*
- ✓ *Դպրոցի կառավարման ժողովրդավարացում, դպրոցի զարգացման գործում ծնողների և համայնքի ներուժի օգտագործման արդյունավետության բարձրացում*
- ✓ *Սոցիալ-մշակութային կենտրոն հանդիսացող դպրոցի ստեղծում:*
- ✓ *Սովորողների ինտեգրում հասարակական կյանքին, արտադպրոցական աշխատանքներին, ազգային մշակույթին, հայրենասիրական արժեքների ձևավորում, ամրապնդում*
- ✓ *Ծնողների մասնակցության ապահովում սովորողների ուսուցման, դաստիարակության գործընթացին*
- ✓ *Բուլլինգի կանխարգելում*
- ✓ *Խորհրդակցական մարմինների արդյունավետ գործունեություն*



2.2 «Շատինի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի զարգացման ծրագրի խնդիրների սահմանումը. Դրանց համապատասխանությունը նպատակներին

Սահմանված նպատակներին հասնելու համար դպրոցի Զարգացման ծրագրում

ձևակերպվել և սահմանվել են հետևյալ խնդիր-ուղղությունները. Ծրագրի ռազմավարական գլխավոր ուղղությունը ներդաշնակորեն զարգացած, սոցիալապես գործուն և ստեղծագործ, հայրենասիրության, պետականության և մարդասիրության ոգով դաստիարակված անձի ձևավորմանը միտված կրթության համակարգի առաջանցիկ զարգացումն է՝ որպես պետականության ամրապնդման և հասարակության սոցիալ-տնտեսական առաջընթացի գործոն: Զարգացման ծրագրով սահմանված նպատակների իրագործման և խնդիրների լուծման հիմնական արդյունքը 21-րդ դարի դպրոցի ստեղծումն է, որը կունենա.

- որակյալ կրթություն և հրապուրիչ կրթական միջավայր,
- բարձր որակավորում ունեցող ուսուցչամանկավարժական համակազմ,
- ինքնազարգացմամբ մոտիվացված սովորողներ,
- մրցունակ սերունդ ձևավորելու կարողություններ,
- արդի նյութատեխնիկական բազա, այդ թվում՝ ՏՀՏ,
- առաջադեմ կրթական տեխնոլոգիաներ,
- դպրոցի խնդիրներով մտահոգ խորհրդակցական մարմիններ:

Դպրոցի Զարգացման ծրագրով նախանշված են հաստատության ամբողջական նպատակները և խնդիրները, որոնք բխում են դպրոցի, համայնքի կարիքներից և համապատասխանում են առկա հնարավորություններին:

- Դպրոցի շենքային պայմանների և նյութատեխնիկական
- բազայի արդիականացում, կրթության որակի և սովորողների առաջադիմության
- բարձրացում, համագործակցության խորացում դպրոցի կառավարման և խորհրդակցական մարմինների հետ,
- ուսուցչամանկավարժական անձնակազմի կարողությունների զարգացում,
- համագործակցության ընդլայնում պետական և համայնքային կառավարման մարմինների, հասարակական կազմակերպությունների հետ,
- ուսումնական միջավայրի բարելավում,
- նորարական ու ստեղծարար տեխնոլոգիաների տեղայնացում,

- դպրոցի գործունեությունը կարգավորող իրավական ակտերի շուրջ աշխատանքների իրականացում:
  Սահմանված առանձին խնդիրների լուծման համար նախատեսված են հետևյալ աշխատանքները.

1. Մանկավարժների մասնագիտական որակավորման բարձրացման միջոցառումներ.

- Մշակել կազմակերպման և ղեկավարման այնպիսի մեխանիզմներ, որոնք պետք է

ուղղված լինեն մանկավարժների մասնագիտական կատարելագործմանը:

- Ստեղծել կազմակերպչական այնպիսի նախադրյալներ, որոնք կապահովեն

դպրոցի մանկավարժական համակազմի մասնագիտական ու մեթոդական աշխատանքների որակական բարելավումը:

- Խթանել ուսուցիչների ներգրավումը մասնագիտական և մեթոդական զարգացմանը նպաստող վերապատրաստումների:
- Շահադրդել ուսուցիչներին՝ նախագծելու և իրականացնելու հետազոտական և նախագծային աշխատանքներ. ստեղծել պայմաններ մանկավարժների փորձարարական աշխատանքների իրականացման համար:
- Ձևավորել անհրաժեշտ միջավայր՝ մանկավարժական փոխգործակցության և առաջավոր փորձի փոխանակման համար:

2. Կրթության որակի բարձրացման միջոցառումներ.

- Ապահովել սովորողների ստեղծագործական և նախագծային աշխատանքների

խթանումը, նրանց վերլուծական, քննադատական մտածողության,

ինքնազարգացման, կարողունակությունների և հմտությունների

կատարելագործման, տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործման

ունակությունների զարգացումը:

- Ձևավորել էլեկտրոնային գրադարանային հարթակ: Ստեղծել պայմաններ

սովորողների գրական գործունեության ակտիվացման և ընդլայնման համար:

- Բարձրացնել սովորողների գործնական ունակությունների զարգացումը,

զարգացնել ֆիզիկական և ռազմահայրենասիրական դաստիարակության

ամրապնդմանն ուղղված միջոցառումները:

- Նպաստել դասի արդյունավետությունը բարձրացնող մեխանիզմների կիրառմանը՝

արդյունավետ ուսուցման տեխնոլոգիաների, ակտիվ ուսուցման մեթոդական

հնարների, ուսումնատեխնիկական անհրաժեշտ պարագաների, ուսուցման արդի և

փոխներգործուն միջոցների ներդրմամբ:

- Պլանավորել և շարունակաբար անցկացնել թեմատիկ-ուսումնական մրցույթներ,

առարկայական շաբաթներ, բաց դասեր, գործնական աշխատանքներ:

- Ընդլայնել ժամանակակից տեխնիկական միջոցներով կահավորված

դասարանների համալրումը և հնարավորությունները:

- Դասավանդման որակը բարձրացնելու նպատակով պարբերաբար կազմակերպել

վերապատրաստումներ, դասախոսություններ, հանդիպումներ, կոնֆերանսներ, ուսուցողական և բաց դասեր, կատարել դասալսումներ, մեծ ուշադրություն

դարձնել դասավանդողների գնահատելու ընթացակարգերի կիրառմանը:

- Ընդլայնել կազմակերպվող լրացուցիչ կրթական ծառայությունները, ներառել գեղագիտության և սպորտի ոլորտները:

3. Կառավարման և խորհրդակցական մարմինների դերի բարձրացման միջոցառումներ. Դպրոցի կառավարման և խորհրդակցական մարմիններում առկա է գործունեության արդյունավետ մեխանիզմների զարգացման անհրաժեշտություն:
ա) Կառավարման խորհուրդ.
Առավել արդյունավետ գործունեության հասնելու համար անհրաժեշտ է բարձրացնել կառավարման խորհրդի ներգրավածությունը հետևյալ ուղղություններում.

- հաստատության ընդհանուր և ուսումնադաստիարակչական գործունեության

նկատմամբ ընթացիկ վերահսկողության իրականացում,

- զարգացման ծրագրի իրականացման վերահսկողություն,
- անհրաժեշտ հաշվետվությունների քննարկում և վերլուծություն,
- ներքին և արտաքին գնահատման արդյունքների վերլուծություն,
- հիմնադրի կողմից իրեն վերապահված և (կամ) դպրոցի կանոնադրությամբ նախատեսված այլ լիազորությունների կատարում:

բ) Ծնողական խորհուրդ.

- ուսումնադաստիարակչական աշխատանքներում ծնողական խորհրդի մասնակցության դերի բարձրացում,
- ծնողական խորհրդի և խորհրդակցական մյուս մարմինների միջև փոխգործակցության մեխանիզմների կիրառմամբ առկա կապերի ամրապնդում,
- ծնողական խորհրդի անդամների ներգրավում վերապատրաստման դասընթացների և սեմինարների,
- սովորողների ուսուցման և դաստիարակության գործընթացներում միասնական պահանջների ձևավորում,
- արտադպրոցական և արտադասարանական աշխատանքներում ծնողական խորհրդի մասնակցության խթանում,
- սովորողների հանգստի և ժամանցի կազմակերպման գործում աջակցության մեխանիզմների մշակում,
- փոխվստահության և համագործակցության ընդհանուր մթնոլորտի ձևավորում:

գ) Աշակերտական խորհուրդ.

- աշակերտական խորհրդի արդյունավետ գործունեության խթանում,
- սովորողների ինքնավարության և ինքնակառավարման մեխանիզմների

կատարելագործում,

- սովորողների համար առողջ և բարենպաստ սոցիալ-հոգեբանական մթնոլորտի ամրապնդում,
- սովորողների առողջության, անվտանգության, սոցիալական ապահովության ուղղությամբ իրականացվող միջոցառումներին աշակերտական խորհրդի մասնակցության օժանդակում,
- սովորողների կրթության և ինքնակրթության, նրանց համակողմանի զարգացմանն ուղղված ծրագրերի իրականացման ապահովում,
- դպրոցում այնպիսի միջավայրի ձևավորում, որը կնպաստի յուրաքանչյուր սովորողի (այդ թվում՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող) ստեղծագործական ազատության ապահովմանը:

2.2 ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Պարբերաբար հաշվի առնելով մի շարք արտաքին խանգարող և նպաստող հանգամանքներ, ակնկալում ենք հետևյալ արդյունքները.

- *Կընդլայնվեն աշակերտների՝ որպես անհատների կայացման համար անհրաժեշտ նախադրյալները*
- *Կընդլայնվեն ծնողական և աշակերտական խորհուրդների դերը և ընդգրկվածությունը դպրոցի ներքին կյանքում*
- *Կրթության գաղափարախոսական հենքի ապահովում՝ հենվելով պետության և համամարդկային արժեքների ներդաշնակեցման սկզբունքների վրա։*
- *Բոլոր սովորողների համար որակյալ կրթության մատչելիության ապահովում*

●Սովորողների ստեղծագործական և ստեղծարար մտքի զարգացում՝ կրթության մեթոդների անհատականացման և արդիականացման միջոցով:

● Սովորողների մասնագիտական ճիշտ կողմնորոշում,

● Մշակույթը որպես հոգևոր սնունդ ընկալելու ունակություն,

● Քաղաքացիական գիտակցության իրավունքի ըմբռնում,

● Հանրակրթությունը՝ որպես մարդու և քաղաքացու շահերին նպաստող, անհատին ու ժողովրդին ծառայող համակարգի ընկալում:

3.1 ԿՐԹԱԿԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

ՀՀ Վայոց ձորի մարզի Շատինի միջնակարգ դպրոցը այն վայրն է, որտեղ ձևավորվում են 21-րդ դարի թվային պահանջներով զինված, ինքնուրույն մտածող, ժամանակին համընթաց քայլող, ստեղծագործող, մարդասեր, կրթված, հայրենասեր անհատներ, որոնք կերտում են ապագայի Հայաստանը՝ ուժեղ, անկախ, մրցունակ և ազգային արժեքների պահպանմամբ:

Յուրաքանչյուր կազմակերպության, այդ թվում մեր դպրոցի առաքելությունըկրթական կարիքներն են.

- Ժամանակի պահանջներին համապատասխան սերունդ կրթելն ու դաստիարակելը:
- Ապագայի մարտահրավերներին դիմակայելու և պայքարելու պատրաստ և ունակ մարդու ձևավորումը:
- Ուսումնական, սոցիալ-հոգեբանական, ստեղծագործական այնպիսի միջավայրի ձևավորումը, որը կապահովի յուրաքանչյուր սովորողի ստեղծագործական հմտությունների, քննադատական մտածողության, անհատական ունակությունների զարգացումը:
- Ազգային գաղափարախոսության կրող և համաշխարհային մշակութային կյանքին ինտեգրված քաղաքացի դաստիարակելը, ով

ունակ կլինի դիմագրավելու ժամանակակից մարտահրավերներին և իր ավանդը ներդնելու հայկական մշակույթի զարգացման և համաշխարհային հարթակներում այն ներկայացնելու գործին:

- Տեղեկատվական բարձր տեխնոլոգիաների կիրառումը դարձնել ամենօրյա կրթության մաս: Սովորողներին հնարավորություն տալ սեփական նախաձեռնություններն ու ծրագրերը իրականացնել արդի ժամանակներին համահունչ:
- Սովորողների մասնագիտական կողմնորոշմանը աջակցելը:
- Յուրաքանչյուր սովորողի համար այնպիսի բարոյահոգեբանական միջավայրի ստեղծումը, որտեղ սովորողը կարող է դրսևորել իր կարողություններն առավելագույն ձևով:
- Մերօրյա մարտահրավերների համատեքստում առանձնակի կարևորել լեզուների ուսուցումը, որոնց տիրապետումը 21-րդ դարի ստեղծագործող անհատի համար առաջին հերթին հաղորդակցման և մասնագիտական զարգացման ապահովման երաշխիք է:
- Կրթական երեք աստիճաններում ապահովել կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների կրթություն ստանալու հավասար իրավունքը: Կիրառել կրթության և արվեստի ներգործության ուժը սովորողների առողջական, հոգեբանական խնդիրները հաղթահարելու գործում:
- Կարևորելով յուրաքանչյուր սովորողի անհատական կարողություններն ու ունակությունները՝ ստեղծել միջավայր, որը հաճելի և սիրելի է սովորողի համար:
- Զարգացնել սովորողների իրավագիտակցությունը, ապահովել ինքնակառավարման մարմինների լիակատար և ակտիվ գործունեությունը:
- Սովորողների համար ստեղծագործական կարողությունների զարգացման տարբեր հարթակների ապահովումը դարձնել առաջնահերթություն:
- Կրթության մեջ կարևորել ոչ միայն գիտելիքը,այլև կարողունակությունները:
- Ժողովրդավարական արժեքների խթանումն ու դաստիարակումը համարել

առաջնահերթություն:

- Ազգային հենքի վրա տրվող կրթությունն ու դաստիարակությունը դնել հայրենասիրական դաստիարակության հիմքում:
- Դպրոցը պետք է լինի ջերմ, սիրելի միջավայր, որտեղ սովորողը իրեն զգա ազատ, անկաշկանդ և ապահով:
- Ուսուցիչը պետք է լինի նվիրված, ծով համբերությամբ, հոգատար, սրտացավ, սիրառատ, հանդուրժողականությամբ և անսպառ գիտելիքներով օժտված:
- Գիտակցեն, կրեն և գիտակցելով պահպանեն դարերի խորքից եկած հայի տեսակը և գիտելիքի լույսը կրելով իրենց մեջ՝ դառնան հուսալի հենարան հայրենիքի համար, ինչն էլ կլինի դպրոցի, մանկավարժական հանրույթի փոքրիկ ներդրումը հայրենիքի հզորացման գործում

3.2 ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԻՆ

Այսօր հանրակրթական ուսումնական հաստատությունները Հայաստանի Հանրապետության համար հանդիսանում են անչափ կարևոր կառույցներ, որտեղ կրթվում և դաստիարակվում է վաղվա երկրի քաղաքացին: Այդ առումով դպրոցներում ծավալված գործունեությունը պետք է համապատասխանի պետության կրթական քաղաքականությանը: Այս առումով հարկ ենք համարում նշել, որ կարևոր է համագործակցել նոր չափորոշիչների ներդրման և ուսուցիչների պարտադիր ատեստավորումների իրականացման համար: Հայաստանի Հանրապետության կրթական համակարգը նպատակաուղղված է հայ ժողովրդի հոգևոր և մտավոր ներուժի ամրապնդմանը, ազգային և համամարդկային արժեքների պահպանմանն ու զարգացմանը: Կրթության բնագավառում պետական քաղաքականության կազմակերպական հիմքը կրթության զարգացման պետական ծրագիրն է, որը ՀՀ կառավարության ներկայացմամբ հաստատում է ՀՀ Ազգային ժողովը: ՀՀ անկախության հռչակումից հետո սկսվել են իրականացվել կրթության ոլորտի բարեփոխումներ, որոնք հնարավորություն են տվել լուծելու համակարգում առկա շատ խնդիրներ, կայունացնելու իրավիճակը և նախադրյալներ ստեղծելու զարգացման համար:

3.3ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ, ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻՆ ԵՎ ՆԵՐՈՒԺԻՆ

- Ռեսուրսներով ապահովվածության
- կենսաբանություն առարկաների լաբորատորիաների բացակայություն: խնդիրները՝
- Դպրոցի նյութատեխնիկական բազայի, գույք-սարքավորումների և նորագույն տեխնիկայի սակավություն:
- Գրադարանին կից չունենք ընթերցասրահ ակտիվ ընթերցանությունը խթանող գրական-երաժշտական ցերեկույթների, քննարկումների սակավություն:
- Ձեռնարկատիրական գործունեության բացակայություն

- Առկա չէ բազմամասնագիտական խմբի աշխատանքների համար անհրաժեշտ կահավորված ուսուցման դասասենյակ-կաբինետ

Քննարկվել և հավանության է արժանացել
հաստատության խորհրդի կողմից
խորհրդի նախագահ՝

Հաստատում եմ՝
ՀՀ Վայոց ձորի մարզպետ՝
Ա. Գրիգորյան

« Շատինի դպրոց»-ի 2022- 2023 ուսումնական տարվա

ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՑՈՒՑԱԿ

Պաշտոնների անվանումը	հաստիքները	դրույքաչափը	հավելավճար	ամսական աշխատավարձ	ընդամենը աշխատավարձ	ընդամենը տարեկան աշխատավարձի ֆոնդը
Վարչական միավորներ						
Տնօրեն	195000	1	0	195000	195000	2340000
Փոխտնօրեն	170000	1	0	170000	170000	2040000
ԸՆԴԱՄԵՆԸ						**4380000**
Մանկավարժական հաստիքներ						
Ձիոնդեկ, ՔՊ	115060	1	47812	169072	169072	2028864
Ուսուցչի օգնական	93750	1,5	0	140625	140625	1687500
Հոգեբան	110770	1	0	110770	110770	1329240
ԴԱԿ	111870	1	9500	121370	121370	1456440
ԸՆԴԱՄԵՆԸ						**6502044**
Ուսումնաօժանդակ անձնակազմ						
Գլխավոր հաշվապահ	176000	1	0	176000	176000	2112000
Համակարգչային օպերատոր	104000	1	0	104000	104000	1248000
Գրադարանավար	104000	0,7	0	72800	72800	873600
Լաբորանտ	104000	1	0	104000	104000	1248000
Դռնապահ	95625	1	0	95625	95625	1147500
Հավաքարար	95625	3	0	286875	286875	3442500
Պահակ	104000	2	0	208000	208000	2496000
Պահակ	95625	1	0	95625	95625	1147500
բանվոր՝ սեզոնային աշխատող	104000	1	0	34670	34670	138680
ԸՆԴԱՄԵՆԸ						13853780
ԸՆԴԱՄԵՆԸ						**24735824**

Դպրոցի տնօրեն՝

Վայոց ձորի մարզի Շատինի միջնակարգ դպրոցի 2022-2023 ուստարվա աշակերտական համակազմը

Դասարան	Աշակերտների թիվը	Դասարանների թիվը	Տղա	Աղջիկ
1-ին	20	1	9	11
2-րդ	25	1	16	9
3-րդ	14	1	5	9
4-րդ	20	1	9	11
Ընդամենը	79	4	39	40
5-րդ	12	1	6	6
6-րդ	17	1	10	7
7-րդ	19	1	14	5
8-րդ	16	1	9	7
9-րդ	15	1	8	7
Ընդամենը	79	5	47	32
10-րդ	11	1	6	5
11-րդ	15	1	9	6
12-րդ	17	1	9	8
Ընդամենը	43	3	24	19
Ընդամենը դպրոցում	201	12	110	91
Նախակրթարան	12	1	6	6



4.1 ՍԱՀՄԱՆՎԱԾ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԿԱՏԱՐՈՂՆԵՐԸ, ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ, ԱՆՀՐԱԺԵՇՏ ՄԻՋՈՑՆԵՐՆ ՈՒ ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲԱԶԱՆ

Դպրոցի Զարգացման ծրագրում՝ ըստ ոլորտների սահմանված նպատակների և խնդիրների, մշակված են համապատասխան գործողությունները, հստակ ներկայացված են պատասխանատուները (կատարողները) և ժամկետները: Հաստատության համակարգված զարգացումը Ծրագրի միջոցով ներկայացնելը հիմք է ստեղծում հաստատության գործունեության աշխատանքային տարեկան պլանի մշակման համար, որը տվյալ հաստատության միջնաժամկետ (մեկ ուսումնական տարվա համար կազմված) զարգացման ծրագրային փաստաթուղթն է: Հաստատության գործունեության տարեկան աշխատանքային ծրագրի դրույթները մշակվում են դպրոցի Զարգացման ծրագրի հիման վրա: Ընդ որում, երկարաժամկետ, սովորաբար 5 տարվա համար մշակված ծրագիրը պարբերաբար տնօրենի կողմից վերանայվում է և համապատասխան փոփոխություններով հանդերձ՝ ներկայացվում

կառավարման խորհրդի հավանությանը:
Գործողությունները պլանավորելիս հաշվի են առնվում հետևյալ հանգամանքները.

- ✓ Արդյո՞ք սահմանված գործողությունները նպատակաուղղված են տվյալ խնդրի լուծմանը:
- ✓ Արդյո՞ք գործողությունները ձևակերպված են հստակ, չեն պարունակում երկիմաստություն, բոլոր կատարողները դրանք միանշանակ ե՞ն ընկալում:
- ✓ Արդյո՞ք հնարավոր է ճշգրիտ չափել տվյալ գործողության արդյունքը:
- ✓ Չե՞ն սահմանված այնպիսի գործողություններ, որոնց արդյունքների հասանելիությունը իրատեսական չէ:
- ✓ Արդյո՞ք բոլոր գործողությունների ամբողջությունը ապահովում է տվյալ խնդրի լուծումը:

ԴԶԾ-ի իրականացման փուլում սահմանված նպատակների և խնդիրների հստակեցման և ճշգրտման արդյունքում գործողությունները կարող են վերանայվել՝ պայմանավորված դպրոցի տարեկան աշխատանքային պլանում ԴԶԾ-ից բխող նպատակների և դրանց խնդիրների ժամանակային փոփոխություններով և արտաքին ու ներքին գործոնների ազդեցություններով: Ցանկացած գործողության համար սահմանվում են ակնկալվող արդյունքները:Դրանք պետք է լինեն հավաստի, չափելի, ապահովեն տվյալ խնդրի համապարփակ ու լիարժեք իրականացումը: Ակնկալվող արդյունքները պետք է արտահայտվեն կոնկրետ ցուցանիշներով (թվեր, տոկոսներ, բնութագրիչներ) և միանշանակ ընկալելի լինեն տվյալ գործողությունն իրականացնող պատասխանատուների և կատարողների համար:

Ակնկալվող արդյունքներին ներկայացվող պահանջներն են.

- ➢ տեսանելի են,
- ➢ բխում են հիմնախնդրի հստակ պահանջից,
- ➢ ստուգելի են,
- ➢ կապված են նպատակների և խնդիրների հետ,
- ➢ իրատեսական են (կապը ռեսուրսների և ռիսկերի հետ):

ՆՊԱՏԱԿ 3. Կրթության որակի շարունակական բարելավում և արդի մարտահրավերներին համապատասխանեցում, առավել արդիական և գործնական գիտելիքի տրամադրում:					
ԽՆԴԻՐ. Կրթության կազմակերպման համալիր մոտեցում և կրթության արդյունավետ կառավարման համակարգի ձևավորում:					
Միջոցառումներ	Ակնկալվող արդյունք		Պատասխանատուներ	Ժամկետ	Ֆինանսավորում անաղբյուր
ՆՊԱՏԱԿ 1. Ուսումնական բարենկեցիկ, անվտանգ միջավայրի ապահովում:					
ԽՆԴԻՐ. Դպրոցը դարձնել անվտանգ, բարենկեցիկ, նրա անդամների համար:					
Միջոցառումներ	Ակնկալվող արդյունք		Պատասխանատուներ	Ժամկետ	Ֆինանսավորման աղբյուրներ
Դասասենյակների, տարածքների, կաբինետների արդիականացում:	Երեխաների կրթական անվտանգ միջավայրի ապահովում		Դպրոցի տնօրեն, Աշակերտական խորհուրդ, Համայնք	2023-2026թթ Շարունակական յուրաքանչյուր ուսումնական տարի:	Պետական բյուջե Բարեգործական կարգով այլ Ֆինանսական միջոցներ
ՆՊԱՏԱԿ 2. Կրթական պահանջմունքները բավարարող ուսումնական միջավայրի ապահովում:					
ԽՆԴԻՐ. Դպրոցի նյութատեխնիկական բազայի հարստացում:					
Միջոցառումներ	Ակնկալվող արդյունք		Պատասխանատուներ	Ժամկետ	Ֆինանսավորում անաղբյուր
Տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրում:	Սովորողների ուսուցումը կկազմակերպվի նյութատեխնիկական նորացված բազայի հիման վրա			2023-2025թթ Շարունակական յուրաքանչյուր ուսումնական տարի՝	Պետական բյուջե Բարերարներ

ՆՊԱՏԱԿ 4. Դպրոցում իրականացվող ուսումնադաստիարակչական աշխատանքների բարելավում:				
ԽՆԴԻՐ. Սովորողների ուսուցման և դաստիարակության արդյունավետ մեխանիզմների մշակում: Ներդպրոցական վերահսկողության կազմակերպում, աշխատանքային կարգապահության ապահովում, համագործակցային փոխհարաբերությունների ամրապնդում:				
Միջոցառումներ	Ակնկալ վող արդյուն ք	Պատասխանատ ուներ	Ժամկետ	Ֆինանսավ որ ման աղբյուր
Ապահովել արտակարգ ընդունակություններ դրսևորած աշակերտների մասնակցությունը օլիմպիադաներին, մրցույթներին, միջոցառումներին: Ներդնել աշակերտների ստեղծագործական, հետազոտական, նորարարական աշխատանքների խրախուսման մեխանիզմներ՝ պատվոգեր, պարգևներ, խրախուսման այլ ձևեր: Զարգացնել ուսուցիչների դասավանդման ժամանակակից մեթոդների կիրառման կարողություններն ու հմտությունները	Գիտելիքների մատուցում՝ պետական կրթական չափորոշիչնե րին համապատա ս- խան	Դպրոցի համակազմ Ծնողական համակազմ Աշակերտակ ան խորհուրդ Համայնք	2023-2028թթ Շարունա կան յուրաքան չյուր ուսումնա կան տարի՝	Պետակ ան բյուջե Դրամաշնո րհ ներ Բարերարն եր Օրենքով չարգելված կարգով այլ ֆինանսակ ան միջոցներ

ՆՊԱՏԱԿ 5. Խորհրդակցական մարմինների արդյունավետ համագործակցություն:				
ԽՆԴԻՐ. Թափանցիկության և հաշվետվության ապահովում:				
Միջոցառումներ	Ակնկալվող արդյունք	Պատասխան ա-տուներ	Ժամկետ	Ֆինանսավորման աղբյուր
Ծնողներին մասնակից դարձնել սովորողների կրթության և դաստիարակության գործընթացին: Ապահովել առողջ համագործակցային աշխատանքային հարաբերություններ աշակերտ-ուսուցիչ, աշակերտ-աշակերտ, ծնող-ուսուցիչ օղակներում:	Կամրապնդվեն աշակերտ-ծնող, աշակերտ-ուսուցիչ, աշակերտ-համայնք-դպրոց հարաբերությունները Կընդլայնվեն ծնողական և աշակերտական խորհուրդների դերը և ընդգրկվածությունը դպրոցի ներքին կյանքում:	Դպրոցի համակազմ Ծնողական համակազմ Աշակերտական խորհուրդ	Յուրաքանչյուր ուստարի	Պետական բյուջե Դրամաշնորհներ Բարերարներ Օրենքով չարգելված կարգով այլ ֆինանսական միջոցներ

5.1 Ուսումնական հաստատության զարգացման ծրագրի կատարման պատասխանատուներ

Զարգացման ծրագրի արդյունավետ իրականացման համար այն պարունակում է տեղեկատվություն ծրագրի կատարման պատասխանատուների վերաբերյալ: Ընդ որում, Ծրագրի մշակումից հետո այդ տեսանկյունից անհրաժեշտ է այն պարբերաբար վերանայել՝ հաշվի առնելով հաստատության գործունեության մեջ կատարվող ընթացիկ փոփոխությունները, ինչպես նաև հանրակրթության քաղաքականության ոլորտում իրականացվող բարեփոխումները. դրանց հետևանքով կարող են փոխվել նաև

պատասխանատուները: Յուրաքանչյուր գործողություն իրականացնելու համար ԴԶԾ-ում առանձնացվում են պատասխանատուներ (կատարողներ): Պետք է հաշվի առնել, որ գործողությունն իրականացնող պատասխանատուն և կատարողներն ունենան թիմային աշխատանք կատարելու փորձ և հմտություններ, հակառակ դեպքում կմեծանա տվյալ գործողությունից ակնկալվող արդյունքների ռիսկայնությունը: Անհրաժեշտ է նաև պլանավորել պարբերական հաշվետվությունների ձևաչափ (մեխանիզմ): Դպրոցի զարգացման ծրագրի իրականացումն ապահովելու համար անհրաժեշտ է բոլոր պատասխանատուների փոխհամագործակցված և փոխներգործուն աշխատանքը: Դրա պլանավորման և իրականացման պատասխանատուն առաջին հերթին հաստատության տնօրենն է: Կարևոր է ընդգծել, որ կառավարման ժողովրդավար և արդյունավետ մեխանիզմների ապահովման հետ մեկտեղ անհրաժեշտ է հստակ իրականացնել գործողությունների պատասխանատուների նշանակում: Ցանկալի արդյունքների հնարավոր է հասնել բացառապես հաստատության բոլոր աշխատակիցների՝ ուսումնական և դաստիարակչական ոլորտների ղեկավարների, առանձին ստորաբաժանումների պատասխանատուների, ուսուցիչների, մանկավարժական աշխատողների, ինչպես նաև՝ ուսումնաօժանդակ (վարչատնտեսական) մասի աշխատողների համընդհանուր աշխատանքի շնորհիվ:

6.1 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ ԵՎ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ

«Հանրակրթության մասին» օրենքով նախատեսված է դպրոցի գործունեության գնահատման մեխանիզմը: Ուսումնական հաստատության գործունեությանը տրվում է ներքին և արտաքին գնահատական:

Դպրոցի զարգացման ծրագրի վերահսկողության արդյունավետ միջոցառումներ են.

- ***Դպրոցի խորհրդի կողմից առնվազն տարեկան մեկ անգամ դպրոցի տվյալ ուստարվա աշխատանքային ծրագրում ընդգրկված դպրոցի զարգացման ծրագրի դրույթների կատարողականների, հաշվետվությունների քննարկումը և համապատասխան գնահատականների ամրագրումը***
- ***Դպրոցի խորհրդի կողմից տնօրենին խորհրդատվական և այլ***

աջակցության շարունակական տրամադրումը

- *Համայնքի և դպրոցի այլ շահառուների՝ դպրոցի զարգացման ծրագրի իրականացման աշխատանքներին կամ այդ շրջանակում կազմակերպված միջոցառումներին շարունակական ներգրավումը*
- *Դպրոցի խորհրդի մասնակցությունը տնօրինության կողմից դպրոցի զարգացման ծրագրի արդյունքների գնահատմանը*

Դպրոցն ամեն տարի ամփոփում է ծրագրի իրականացումը, ներքին գնահատման միջոցով անփոփում կատարված աշխատանքը, կազմում է հաջորդ տարվա աշխատանքային պլանը, խորհրդակցում մանկավարժական խորհրդի հետ և հաստատում կառավարման խորհրդում:

6.2 ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԵՎ ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹՅԱՆ ՎՐԱ ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

- Դպրոցի նորմատիվային ամրապնդում դաստիարակության ոլորտում, սովորողների ուսուցման ու զարգացման ապահովում դպրոցի կրթական ծրագրերի շրջանակում:
- Սովորողների իրավունքների պահպանումը պետական կրթական չափանիշներին համապատասխան:
- Ուսուցման կազմակերպում՝ ազգային գաղափարախոսության հենքի վրա.
- Մեթոդական և դիդակտիկ նյութերով ապահովում:
- Սովորողների համար ստեղծել առողջ և բարենպաստ սոցիալ-հոգեբանական մթնոլորտ
- Մրցունակ շրջանավարտների պատրաստում՝ շուկայական պահանջներին համապատասխան
- Սերմանել հայրենասիրություն, մարդասիրություն, սեր ուսման և աշխատանքի նկատմամբ, բարոյական բարձր հատկանիշներ, հավատ ապագայի նկատմամբ, ձգտում իրավական հավասարության

ՇԵՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

- Դպրոցի սպորտ դահլիճի և հանդիսությունների դահլիճի նորոգում և համապատասխան գույքի ձեռքբերում:
- Դպրոցի ցանկապատի նորոգում:
- Դպրոցի գլխավոր մասնաշենքի նորոգում

6.3 ԲԱԶՄԱԿԱՐԾԻՔ, ՆԵՐԱՌԱԿԱՆ ԵՎ ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԱՐԺԵՔԱՅԻՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

- Գնահատել դպրոցի խորհրդակցական և կառավարման մարմինների մասնակցային գործունեությունը:
- Գնահատել սովորողների մասնակցությունը ներդպրոցական և արտադպրոցական միջոցառումներին:
- Ներառական, բազմակարծիք և մասնակցային միջավայրի ստեղծում:
- Սովորողների առաջադիմության վերլուծություն:
- Ծնողների և մանկավարժական կոլեկտիվի կողմից երեխաների դաստիարակության հարցում միասնական պահանջների ձևավորում
- Ապահովել ծնողներին տեղեկատվությամբ, կազմակերպել խորհրդատվություններ :

Կազմակերպել հանդիպումներ, սեմինարներ ծնողների համար, որտեղ կքննարկվեն դպրոցի գործունեության վիճակը, հեռանկարային ծրագրերը, ուսումնադաստիարակչական աշխատանքների արդյունավետ կազմակերպման հարցերը:

6.4 ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՐԺԵՎՈՐՄԱՆ,ԽՐԱԽՈՒՄՄԱՆ ԵՎ ԻՆՔՆԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

- Կազմակերպման և ղեկավարման մեխանիզմների մշակում,որը պետք է ուղղված լինի մանկավարժների մասնագիտական որակավորման մակարդակի հետագա բարձրացմանը
- Նորմատիվ իրավական և կազմակերպական այնպիսի նախադրյալների ստեղծում, որոնք կապահովեն դպրոցի մանկավարժական համակազմի մեթոդական աշխատանքների որակական բարելավումը:

- Մանկավարժներին աջակցել՝ մշակելու, ներկայացնելու և տպագրելու իրենց մեթոդական աշխատանքների արդյունքների վրաբերյալ նյութեր:
- Կազմակերպել ուսուցիչների վերապատրաստում ՏՀՏ կիրառման ուղղությամբ
- Շահագրգռել մանկավարժներին՝ կատարելու հետազոտական աշխատանքներ, ստեղծել պայմաններ մանկավարժների փորձարարական աշխատանքների իրականացման համար

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

ա) Կառավարման խորհրդի դերի բարձրացումը դպրոցի հետ համագործակցության արդյունքում

Դպրոցի գործունեությունը թափանցիկ դարձնելու համար անհրաժեշտ է բարձրացնել կառավարման խորհրդի դերը: Անհրաժեշտ է ընդլայնել դպրոցի խորհրդի լիազորությունները և իրավունքները հետևյալ ուղղություններով:

- Նյութատեխնիկական բազայի հարստացման ուղղությամբ որոշումների ընդունում
- Կրթության պետական կառավարման մարմնին, լիազորված մարմին դպրոցի զարգացման վերաբերյալ առաջարկությունների ներկայացում
- Դպրոցի շենքի շինարարության վերաբերյալ պետական լիազորված մարմիններին առաջարկությունների ներկայացում
- Ֆինանսական եռամսյակային հաշվետվությունների քննարկում,առաջարկությունների իրականացման համար միջոցների ներդրում
- Միջոցներ ձեռնարկել դպրոցի լրացուցիչ ֆինանսավորման և դրանց արդյունավետ օգտագործման համար:

բ) Ծնողական խորհրդի հետ համագործակցության բարելավում

Սովորողների կրթության զարգացման գործում զգալի ներդրում ունեն ծնողները: Ամենօրյա աշխատանքի արդյունքում անհրաժեշտ է ձեռք բերել փոխադարձ

վստահությանը: Ծնողական խորհրդին ընդգրկել ուսման կարևորագույն գործառույներում:

- Ծնողի և դպրոցի միջև կապերի ամրապնդում:
- Մասնակցել արտադպրոցական և արտադասարանական դաստիարակչական աշխատանքներին
- Ամրապնդել ծնողական խորհրդի կապը դպրոցի կառավարման խորհրդի և մանկավարժական խորհրդի հետ՝ ապահովելով տեղեկատվության կազմակերպումը և տարածումը
- Աջակցել ծնողական խորհուրդի աշխատանքի կազմակերպմանը՝ հատկապես սովորողների սոցիալ-կենցաղային աշխատանքների համապատասխան բնագավառում: Այդ նպատակով ճշտել՝
    - դպրոց հաճախող այն աշակերտների թիվը, որոնք օգտվում են <<Փարոս>> ծրագրից
    - միակողմանի և երկկողմանի ծնողազուրկ աշակերտների թիվը
    - զոհված ազատամարտիկ ծնողներ ունեցող աշակերտների թիվը
    - հաշմանդամ աշակերտների վերաբերյալ տեղեկատվություն
    - ծնողների խնամքից զրկված աշակերտների թիվը
    - միայնակ մոր խնամքի տակ գտնվող աշակերտների մասին տվյալները
    - աշակերտների թիվ,որոնց ծնողները հաշմանդամ են
- ծնողներին պետք է մասնակից դարձնել սովորողների ուսուցման, դաստիարակության գործընթացին, ուսումնանյութական բազայի հարստացմանը՝ այդ գործում ներգրավելով հովանավորների:
- ծնողներին ներգրավել իրենց երեխաների արտադպրոցական և արտադասարանական աշխատանքներին:

ղ) Հոգաբարձուների խորհրդի ձևավորում

Դպրոցում կրթական գործունեության արդյունավետ կազմակերպման, ինչպես նաև զարգացման ծրագրերին աջակցելու և համայնքի հետ արդյունավետ համագործակցություն ապահովելու համար մեծ դեր ունի հոգաբարձուների խորհուրդը:

- Անհրաժեշտ է դպրոցում ստեղծել հոգաբարձուների խորհուրդ:
- Խորհրդի կազմում ընդգրկել դպրոցի գործունեությամբ շահագրգիռ անձանց, անհատ ձեռներեցների, տեղական իշխանության ներկայացուցիչների
- Նրանց ներգրավել դպրոցի համար ֆինանսական միջոցների հայթայթմանը, նյութատեխնիկական բազայի ամրապնդմանը,արտաբյուջետային ֆոնդի ձևավորմանը
- Հոգաբարձուների խորհուրդը պետք է գտնի բարերարներ, ովքեր ներդրումներ և նվիրատվություններ կկատարեն
- Գործընթացը պետք է լինի առավել թափանցիկ և մատչելի՝ բարերարի, դպրոցի և տեղական ինքնակառավարման ու պետական մարմինների համար:

Այսօր կարևոր և դրական լծակ է հոգաբարձուների խորհուրդը: Դպրոցի մի շարք խնդիրների և կազմակերպչական հարցերի լուծման նպատակով, զարգացման ծրագրերին աջակցելու և համայնքի հետ արդյունավետ համագործակցություն ապահովելու համար մեծ դեր ունի հոգաբարձուների խորհուրդի ձևավորումը: Անհրաժեշտ է ձևավորել դպրոցի հոգաբարձուների խորհուրդ, խորհրդի կազմում ընդգրկել դպրոցի գործունեությամբ շահագրգիռ անձանց, անհատ ձեռներեցների, տեղական իշխանության ներկայացուցիչների: Անհրաժեշտ է նրանց ներգրավել մի շարք

ֆինանսական միջոցների հայթայթմանը, նյութատեխնիկական բազայի ամրապնդմանը, արտաբյուջետային ֆոնդի ձևավորմանը:

Հոգաբարձուների նպատակը պետք է լինի օժանդակ միջոցներով ներդրումներ և նվիրատվություններ ներգրավել անհատներից, դպրոցի շրջանավարտներից և կամավոր ֆինանսավորողներից

6.6 ՀԱԼԱԾԱՆՔԻ, ՕՏԱՐՄԱՆ ԵՎ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԴԵՊՔԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

Սովորողների ինքնավարության և ինքնակառավարման նպատակով դպրոցում պետք է ակտիվացնել աշակերտական խորհրդի գործունեությունը: Նրանց մասնակից դարձնել դպրոցի շրջանակներում որոշումների կայացմանը,կարողանան ազատ արտահայտել իրենց կարծիքը :

- Բարձրացնել դպրոցի աշակերտական խորհրդի գործունեության արդյունավետությունը
- Բարձրացնել դպրոցի աշակերտական խորհրդի դերը ուսումնական գործընթացի կազմակերպման աշխատանքներում
- Աշակերտական խորհրդին տալ լիազորություններ՝ աշակերտների ինքնավարության միջոցով
- Ինքնավարությունը պետք է արտահայտվի աշակերտների ինքնադրսևորման,կարծիքի ազատ արտահայտմամբ և նպաստի համագործակցային հարաբերությունների հաստատմանը, վերացնելով ամեն տեսակի օտարումը
- Ամրապնդել աշակերտ-ուսուցիչ, աշակերտ-ծնող, աշակերտ-համայնք հարաբերությունները՝ բռնության դեպքերի բացահայտման և կանխարգելման նպատակով
- Ինքնավարությունը պետք է արտահայտի և ապահովի աշակերտների իրավունքների պաշտպանությունը, զերծ պահի ցանկացած տեսակի հալածանքից, բռնությունից
- Աշակերտական ինքնավարության միջոցով ապահովել աշակերտների կրթությունը և ինքնակրթությունը, նպաստել նրանց համակողմանի զարգացմանը:

7.1 ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՌԻՍԿԵՐՆ ՈՒ ԴՐԱՆՑ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Դպրոցի զարգացման ծրագրում հնարավոր ռիսկերի պլանավորումը կարևոր է, քանի որ, առանց ռիսկերի հաշվառման ամենալավ մշակված դպրոցի զարգացման ծրագիրն դժվար է իրականացնել, չի արձանագրվում այն ակնկալվող արդյունքները:

Ռիսկերը ցանկացած նպատակադրման իրականացմանը խոչընդոտող հնարավոր անցանկալի գործոններն են: Փոփոխություններին ուղղված ցանկացած գործողություններ (միջոցառումներ) կապված են ռիսկերի հետ: Ռիսկերի ոչ ճշգրիտ կանխատեսումը կարող է հանգեցնել դպրոցի զարգացման առանձին ոլորտներում պլանավորված աշխատանքների թերացմանը և Զարգացման ծրագրի՝ այդ ուղղությամբ նպատակադրված խնդիրների և գործողությունների իրականացման արդյունավետության անկմանը: ԴԶԾ-ում հնարավոր ռիսկերի պլանավորումը դպրոցի զարգացման գործընթացների արդյունավետության ապահովման համար խիստ կարևոր է: Առանց ռիսկերի կանխատեսման Զարգացման ծրագրի իրականացման առանձին փուլերում և ուղղություններում ձախողվում է ակնկալվող գործողությունների կատարողականը, սահմանված վերջնարդյունքները չեն ապահովվում: Զարգացման ծրագրի մշակման գործընթացում ռիսկերը հնարավոր է պլանավորել դպրոցի գործունեության որևէ ոլորտի համար նպատակներ ու խնդիրներ սահմանելու փուլում, քանի որ այդ ժամանակ հեռապատկերում ընդհանուր գծերով ուրվագծվում են սահմանված նպատակի և դրանից բխող խնդիրների իրականացման հնարավոր խոչընդոտները և ձախողումները: Միաժամանակ, Ծրագրի հնարավոր ռիսկերը առավել տեսանելի են դառնում ծրագրի գործողությունների մշակման, դրանց իրականացման ժամանակացույցի և պատասխանատուների պլանավորման փուլերում: ԴԶԾ-ի նպատակադրումների իրագործումը խոչընդոտող ռիսկերը բազմաբովանդակ են և դրանք, ըստ ազդեցության ուղղությունների, կարելի է խմբավորել հետևյալ կերպ.

- Կառավարման և խորհրդակցական մարմինների գործունեության թերացումներ և հնարավոր բացասական ազդեցություններ:
- Կադրային ապահովման, համակազմի մասնագիտական պատրաստվածության բացեր:
- Նյութատեխնիկական բազայի սահմանափակ հնարավորություններ:
- Ուսումնական անհրաժեշտ միջավայրի ձևավորման դժվարություններ:
- Նորամուծությունների ներդրման, նորարարությունների և բարեփոխումների համաչափ ինտեգրման խնդիրներ:
- Ֆորս մաժորային իրավիճակներում (բնական և տեխնածին աղետներ, համավարակներ, անվտանգային իրավիճակներ, պատերազմներ և այլն) անհրաժեշտ գործունեության ապահովման խնդիրներ:

Ըստ կանխատեսման հնարավորության, ռիսկերը կարելի է տարբերակել այսպես. Կանխատեսելի ռիսկերը հիմնականում կապված են գործընթացի առանձին փուլերի հետ. նրանց կանխատեսելիությունը լինում է հարաբերական բնույթի: Չկանխատեսվող ռիսկերը այն ռիսկերն են, որոնք ընդհանրապես անկանխատեսելի են, օրինակ՝ ֆորս մաժորային իրավիճակները: ԴՋԾ-ում ռիսկերը պլանավորվում են դպրոցի գործունեության որևէ ոլորտի համար նպատակներ ու խնդիրներ սահմանելիս: «Ռիսկերը» պլանավորելուց հետո պետք է պլանավորել «ռիսկերի ազդեցության նվազեցմանն ուղղված գործողությունները»: Վերջիններս մարդկային և նյութական ռեսուրսների ուղղորդման և հավաքագրման գործողություններն են, որոնք պետք է չեզոքացնեն սահմանված նպատակներին հասնելու հնարավոր խոչընդոտները:

N	ՌԻՍԿԵՐԸ	ՌԻՍԿԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
1	Դպրոցի աշխատակազմի մասնագիտական պատրաստվածության մակարդակի խոչընդոտներ:	Մանկավարժներին ընդգրկել վերապատրաստման դասընթացներին մասնագիտական և մանկավարժական պատրաստվածության մակարդակը բարձրացնելու նպատակով:
2	Դպրոցի ֆինանսական սահմանափակ հնարավորություններ:	Լրացուցիչ ֆինանսական միջոցների ձեռքբերում, հոգաբարձուների խորհրդի ձևավորում, գտնել հովանավորներ, բարերարներ:
3	Դպրոցի նյութատեխնիկական բազայի ոչ բավարար հագեցվածություն:	ֆինանսական միջոցների ճիշտ պլանավորում,լրացուցիչ միջոցների հայթայթում:
4	Ծնողական համայնքի կողմից դպրոցի գործունեության մասնակցության պասիվություն:	Կազմակերպել հանդիպումներ, սեմինարներ ծնողների համար, որտեղ կքննարկվեն դպրոցի գործունեության վիճակը, հեռանկարային ծրագրերը, ուսումնադաստիարակչական աշխատանքների արդյունավետ կազմակերպման հարցերը:

Ուսումնական հաստատության զարգացման ծրագրի իրականացման համար անհրաժեշտ միջոցները նյութատեխնիկական պարագաները

Դպրոցի զարգացման ծրագրի արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ են որոշակի միջոցներ: Ընդ որում, յուրաքանչյուր գործողության իրականացման և ակնկալվող արդյունքների լիարժեք ապահովման համար հստակ նշվում են պահանջվող անհրաժեշտ միջոցները և նյութատեխնիկական պարագաները: Ուսումնադաստիարակչական գործընթացի արդյունավետ կազմակերպման համար դպրոցն ապահովված է անհրաժեշտ ուսումնական միջավայրով: Հաստատությունը համալրված է նպատակային ուսումնամեթոդական և նյութատեխնիկական բավարար միջոցներով: Դպրոցի շենքը բարեկարգ վիճակում է, հիմնականում ապահովված է աշակերտական գույքով: Դպրոցն ունի մասնակի կահավորված մարզադահլիճ, գրադարան, բնագիտական լաբորատորիա և ՆԶՊ դասասենյակ: Դպրոցի սովորողների համար առկա են հնարավորություններ ՏՀՏ միջոցների

ներգրավմամբ արդի պահանջներին համահունչ ժամանակակից կրթություն ստանալու համար: Դպրոցում գործում են ԱՐՄԱԹ ինժեներական լաբորատորիա, համակարգչային և

տեխնոլոգիայի (արվեստի) դասասենյակներ, որոնք ապահովված են հեռավար ուսուցման սարքավորումներով:

Արվեստի և տեխնոլոգիայի ուսումնական խմբակների շրջանակներում հաստատությունում իրականացվում են կերպարվեստի, ասեղնագործության, մանրանկարչության և կարպետագործության խմբերի մասնագիտական պարապմունքներ:

Դպրոցն ապահովված է ինտերնետ կապով և համակարգչային սարքավորումներով:

Մեծ ուշադրություն է դարձվում սովորողների ռազմամարզական դաստիարակությանը. դպրոցն ունի ՆԶՊ կաբինետ՝ ուսումնական զենքով: Դպրոցի բակային տարածքում կառուցվել է համալիր մարզադաշտ:

Կարևոր է նշել, որ չնայած առկա ձեռքբերումներին, հաստատությունում առկա է անհրաժեշտություն միջոցների և նյութատեխնիկական պարագաների համալրման՝ դրանով ապահովելով դպրոցի զարգացման ծրագրի արդյունավետ իրականացումը: Ուսումնական գործընթացի արդյունավետ կազմակերպման համար անհրաժեշտ է ուսումնական հաստատության համակարգողի հետ համագործակցային աշխատանքի ձևավորում: Դրա շրջանակներում նախատեսված կարիքները պետք է նախապես մշակվեն և պլանավորված կերպով տրամադրվեն համակարգողին՝ ծախսերը գնահատելու, նախահաշիվ կազմելու և լիազոր մարմին ներկայացնելու համար: Ուսումնական հաստատությունը ապահովում է արտադասարանական խմբակների և ուսումնական լաբորատորիաների, մասնագիտական կողմնորոշման կենտրոնների բնականոն գործունեության համար անհրաժեշտ պայմաններ: Ապահովում է անհրաժեշտ պայմաններ ուսումնական պլանին համապատասխան կրթական ծրագրերի իրականացման, կրթական գործընթացի ամբողջական կազմակերպման համար:

Ընդհանուր առմամբ, Շատինի միջնակարգ դպրոցի զարգացումն ապահովելու, սահմանված նպատակներին հասնելու և ընդհանուր ուսումնական բարենպաստ

միջավայր ձևավորելու համար առկա են հետևյալ խնդիրները.

- ուսումնամեթոդական և գեղարվեստական գրականության պաշարի համալրում,
- ՏՀՏ բազայի նորացում, նորագույն համակարգչային սարքավորումների ձեռքբերում,
- առարկայական կաբինետների ձևավորում,
- բնագիտական լաբորատորիայի նյութատեխնիկական վերազինում,
- ժամանակակից տեխնիկական միջոցներով կահավորված դասարանների համալրում և հնարավորությունների ընդլայնում,
- ԿԱՊԿՈՒ սովորողների համար ֆիզիկական միջավայրի ձևավորում և անհատական /խելամիտ/ հարմարեցումների ապահովում,
- անհրաժեշտ գույքով դասասենյակների կահավորում,
- ռազմամարզական վարժական հրապարակների ստեղծում,
- դպրոցական մարզադաշտի կահավորում և գործարկում:

ԴԶԾ-ի վերահսկողությունն իրականացնում է ուսումնական հաստատության կառավարման խորհուրդը՝ տարեկան առնվազն երկու անգամ, յուրաքանչյուր կիսամյակի
վերջում: Զարգացման ծրագրի յուրաքանչյուր գործողության համար մշակվում են վերահսկողության մեխանիզմներ, սահմանվում հաշվետվության ձևեր, ժամանակացույց, որոնք ներկայացվում են խորհրդի հաստատմանը:

Ընդ որում, յուրաքանչյուր տարի անհրաժեշտ է Խորհրդին ներկայացնել Զարգացման ծրագրի կատարման ամենամյա հաշվետվություն, որը պետք է ներառի ծրագրի յուրաքանչյուր բաղադրիչի կատարման վերաբերյալ չափելի տեղեկատվություն:

Խորհրդին ներկայացվում է նաև տարեկան աշխատանքային պլանի ընտրված ժամանակահատվածի համար հաշվետվություն, որը ներառում է.

Հաստատության զարգացման ծրագրի կատարողական ցուցանիշները կարող են ներառել հետևյալ հիմնական ցուցանիշները.

- ✓ Ակադեմիական առաջնորդություն. զարգացման ծրագրի իրականացումը հաստատության տնօրենի առաջնորդությամբ խթանում է սովորողների ակադեմիական առաջընթացն ու կրթության որակի բարելավումը՝ ուսուցման և ուսումնառության ընդհանուր պատկերացումների, դրանց զարգացման, քննարկման, իրականացման և գնահատման արդյունքում:
- ✓ Հաստատության ուսումնական պլանն ամեն տարի կազմվում է կառավարման և խորհրդակցական մարմինների ակտիվ ներգրավվածությամբ՝ որպես մասնակցային գործընթաց՝ հիմնված լինելով հանրակրթության պետական չափորոշչի, համայնքի, բնակավայրի կամ հաստատության գործունեության նպատակների վրա:
- ✓ Ուսումնական տարվա ընթացքում և դրա ավարտին պարբերաբար իրականացվում

է սովորողների առաջադիմության տվյալների, անցկացվող ընթացիկ, ամփոփիչ և արտաքին գնահատումների, կիրառվող մանկավարժական մեթոդների ու մոտեցումների վերլուծություն՝ դրանց արդյունքում բարելավելով առաջադիմության ցուցանիշները: Ամեն տարի իրականացվում է ցածր առաջադիմություն ունեցող

սովորողների համամասնության կրճատման և սովորողների առաջադիմության միջին ցուցանիշների բարելավման միջոցառումներ, ինչպես նաև ըստ անհրաժեշտության վերանայվում են մանկավարժական մոտեցումներն ու մեթոդները:

- ✓ Ապահովվում է ուսուցիչների հասանելիությունը անհրաժեշտ ռեսուրսներին (մարդկային, ժամանակային, նյութատեխնիկական)՝ մանկավարժական ընտրված մեթոդների և մոտեցումների կիրառությունն ապահովելու համար:
- ✓ Գործում է ներդպրոցական վերահսկողության արդյունավետ համակարգ՝ ուսումնական տարվա ընթացքում ուսումնառության և ուսուցման գործընթացում առկա խնդիրների բացահայտման և դրանց կարգավորման համար:
- ✓ նախատեսված խնդիրների կատարմանն ուղղված առանձին գործողությունների կատարման արդյունքները և դրանց հիմնավորումները,
- ✓ գործողությունների չկատարված կամ թերի կատարված լինելու պատճառները (առկայության դեպքում),
- ✓ սահմանված նպատակների և խնդիրների կատարման գնահատումը,
- ✓ զարգացման ծրագրում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին առաջարկությունները:

Դպրոցի զարգացման ծրագրի մշտական վերահսկողությունն իրականացնում է այն հավանության արժանացրած դպրոցի խորհուրդը՝ հանրակրթության ոլորտը կանոնակարգող օրենսդրության համաձայն:

Դպրոցի խորհրդի կողմից ԴԶԾ-ի իրականացման վերահսկողության գործընթացը ոչ թե նպատակ ունի իրացնելու դպրոցի կառավարման այդ մարմնի ֆորմալ իրավունքը, այլ իրականում դպրոցի խորհուրդն իր խորհրդատվական աջակցությամբ, առկա ռեսուրսների ճիշտ ուղղորդմամբ և այլ աշխատանքներով պետք է աջակցի տնօրենին ԴԶԾ-ի իրականացման բոլոր փուլերում:

ԴԶԾ-ի իրականացման վերահսկողության ամենաարդյունավետ միջոցը 5-ամյա ծրագրի հիման վրա կազմված դպրոցի գործունեության տարեկան աշխատանքային պլանների կատարողականներն են: Դրա համար անհրաժեշտ է ԴԶԾ-ի նպատակադրումները ամբողջությամբ արտացոլել դպրոցի տարեկան աշխատանքային պլաններում՝ ԴԶԾ-ով սահմանված ժամանակացույցին համապատասխան:

Այսպիսով՝ վերահսկողության հիմնական մեխանիզմը զարգացման ծրագրի կատարման տարեկան հաշվետվությունն է, որը ներառում է համապարփակ տեղեկատվություն յուրաքանչյուր գործողության իրականացման ուղղության կատարված աշխատանքների, զարգացումների, ինչպես նաև գործողության չկատարման կամ մասնակի կատարման (առկայության դեպքում) պատճառների վերաբերյալ: Տարեկան հաշվետվությունը ներառում է զարգացման ծրագրում փոփոխություններ և լրացումներ կատարելու անհրաժեշտության մասին տեղեկատվություն: Առանձին միջոցառումների սպեցիֆիկությամբ պայմանավորված՝ նախատեսվելեն վերահսկողության այլ մեխանիզմներ:

Դպրոցի գործունեությունը կանոնակարգող իրավական ակտերը.

Դպրոցի գործունեությունը կանոնակարգվում է հետևյալ իրավական ակտերով. «Կրթության մասին», «Հանրակրթության մասին», «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքներ, «ՀՀ աշխատանքային օրենսգիրք», դպրոցի կանոնադրություն, օրինակելի իրավական ակտերի տեղայնացված տարբերակներ, ներքին իրավական ակտեր, նորմատիվ այլ փաստաթղթեր:
Դպրոցին վերաբերող բոլոր իրավանորմատիվային փաստաթղթերի վարումն իրականացվում է սահմանված կարգով: Անհրաժեշտության դեպքում մշակվում և գործածության մեջ են դրվում ներքին գործածության համար նախատեսված իրավական նոր ակտեր (օրինակ՝ ներքին կարգապահական կանոններ, աշխատակարգեր և այլն):

Դպրոցավարությունն իրականացվում է սահմանված կարգով: Դպրոցի գործունեության փաստաթղթերի վարումը թղթային ձևաչափից աստիճանաբար անցում է կատարում էլեկտրոնային ձևաչափի: Դպրոցում առկա են ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից հաստատված ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատություններում գործածության ենթակա անհրաժեշտ փաստաթղթերը. դրանք լրացվում (գործածվում) են սահմանված կարգի համաձայն:
Ուսումնական հաստատությունը պետք է ունենա կառավարման համակարգի զարգացման հնարավորություն: Դպրոցում ներքին վերահսկողության կազմակերպման նպատակով վարվում են նաև դպրոցի կանոնադրությանը համապատասխան մշակված ձևաթղթեր: Ընթացիկ գործունեությունը կանոնակարգելու համար դպրոցն իր իրավասության սահմաններում մշակում և գործածում է նաև այլ փաստաթղթեր:

Դպրոցում կատարվող աշխատանքների կառավարման որակը բարձրացնելու համար անհրաժեշտ է ստեղծել գնահատման արժեքային համակարգ, որի անմիջական աջակցողները պետք է լինեն դպրոցում կրթական գործընթացի մասնակիցները՝սովորողը, սովորողի ծնողը, ուսուցիչը և մանկավարժական այլ աշխատողներ, վարչական աշխատողները, կոլեգիալ կառավարման խորհուրդը,խորհրդակցական մարմինները: Այն դպրոցի կառավարումը կդարձնի ավելի թափանցիկ և արդյունավետ: Դրա համար անհրաժեշտ է զարգացնել նրանց գործունեությունը և բարձրացնել նրանց դերը:

- Ճանաչողական դասերի կազմակերպում և իրականացում արդիական և բոլոր հուզող թեմաների շուրջ:
- Բաց դռների ամիս
- Կազմակերպել գրական ընթերցումներ
- Կազմակերպել մոնիտորինգներ, քննարկումներ, վերլուծություններ

- Շնորհալի աշակերտների աշխատանքներից կազմակերպել ցուցահանդեսներ
- Կազմակերպել առարկայական ցուցահանդեսներ
- Բարեկարգել դասասենյակները
- Նշել տաղավար բոլոր տոները
- Համագործակցություն համայնքի դպրոցների հետ, փորձի փոխանակման նպատակով
- Պարբերաբար կազմակերպել փորձի փոխանակումներ ուսուցիչների հետ
- Անհրաժեշտ է.

Առաջիկա տարիներին կարևոր եմ համարում՝

1. Ջեռուցման հարցի համընդհանուր լուծում առաջին հնարավորության դեպքում :
2. Մարզադահլիճի,մարզագույքի և հանդիսությունների սրահի նոր գույքի ձեռքբերում: Համակարգչային կաբինետի վերազինում
3. ԿԱՊԿՈՒ աշակերտների համար սանհանգույցների հարմարեցում,մուտքի աստիճաններին կից թեքահարթակիների ավելացում:
4. Դասասենյակները հնարավորինս ապահովվել նորագույն տեխնիկայով:
5. Սովորողների սննդի կազմակերպում:

8. ՍԱՀՄԱՆՎԱԾ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ.

№	Գործողությունները և միջոցառումները	Սահմանված ժամկետը ըստ ժամանակացույցի	Նախատեսված պատասխանատուները	Կատարման արդյունքների գնահատման չափանիշներն ըստ ուղղությունների	Անհրաժեշտ միջոցները և նյութատեխնիկական պարագաները	Վերահսկողության մեխանիզմները
1.Դպրոցի շենքային պայմանների և նյութատեխնիկական բազայի արդիականացում						
1.	Դպրոցի գույքի թարմացում, անհրաժեշտ գույքի ձեռքբերում. ✓ տարրական դասարանների ուսումնական գույք՝ 10 աշակերտական սեղան, 10 աշակերտական աթոռ, 5 ուսուցչական սեղան, 5 ուսուցչական աթոռ, 5 պահարան, ✓ բնագիտական լաբորատորիայի ուսումնականգույք՝ 10 սեղան,20 աթոռ,	2024 թ.	Տնօրեն/ համակարգող, հաշվապահ,	Դպրոցի բյուջե, օրենսդրությամբ չարգելված այլ միջոցներ	Զարգացման ծրագրի կատարման ամենամյա հաշվետվություն, աշխատանքային պլանների հաշվետվություններ, ֆինանսական հաշվետվություններ	

	4 պահարան, 2 լաբորատոր. սեղան:				

Հնարավոր ռիսկերը, դրանց մեղմացման կամ չեզոքացման գործողությունները

Ռիսկեր.

Անհրաժեշտ ֆինանսական միջոցների բացակայություն, կամ անբավարարություն:

Ֆորս մաժորային իրավիճակներ (բնական և տեխնածին աղետներ, համավարակներ, անվտանգային իրավիճակներ և այլն)

Ռիսկերի մեղմացման գործողություններ.

Ռիսկերի կառավարման նպատակով կիրականացվեն դպրոցի ֆինանսավորման պլանավորման և արդյունավետ կառավարման աշխատանքներ

№	Գործողությունները և միջոցառումները	Սահմանված ընդ ամենակացուցի ժամկետը	Նախատեսված պատասխանատուները	Անհրաժեշտ միջոցները և նյութատեխնիկական պարագաները	Վերահսկողության մեխանիզմները

2.	Էլեկտրական հոսանքի բաշխման ներքին ցանցի մասնակի վերանոր ոգում. (շենքի 1-ին հարկի 4 դասասենյակները և միջանցքի հատվածը)	2024 թ.	Տնօրեն/ համակարգող, հաշվապահ, տնտեսվար	Դպրոցի բյուջե, օրենսդրությամբ չարգելված այլ միջոցներ	Զարգացման ծրագրի կատարման ամենամյա հաշվետվություն, աշխատանքային պլանների հաշվետվություններ, ֆինանսական հաշվետվություններ
3.	Դպրոցի 1-ին հարկի դասասենյակների մասնակի կոսմետիկ վերանորոգում՝ հատակի ներկման աշխատանքներ. տարրական դասարանների 4 դասասենյակների:	2024 թ.	Տնօրեն/ համակարգող, հաշվապահ, տնտեսվար		
Հնարավոր ռիսկերը, դրանց մեղմացման կամ չեզոքացման գործողությունները Ռիսկեր. Անհրաժեշտ ֆինանսական միջոցների բացակայություն, կամ անբավարարություն: Ֆորս մաժորային իրավիճակներ (բնական և տեխնածին աղետներ, համավարակներ, անվտանգային իրավիճակներ և այլն)					

Ռիսկերի մեղմացման գործողություններ.

Ռիսկերի կառավարման նպատակով կիրականացվեն դպրոցի ֆինանսավորման պլանավորման և արդյունավետ կառավարման աշխատանքներ

№	Գործողությունները և միջոցառումները	Սահմանված ժամկետը ըստ ժամանակացույց	Նախատեսված պատասխանատուները	Անհրաժեշտ միջոցները և նյութատեխնիկական պարագաները	Վերահսկողության մեխանիզմները
5.	էլեկտրոնային գրատախտակի ձեռքբերում	2024-2025 թթ.	Տնօրեն/ համակարգող, հաշվապահ, օպերատոր	Դպրոցի բյուջե, օրենսդրությամբ չարգելված այլ միջոցներ	Զարգացման ծրագրի կատարման ամենամյա հաշվետվություն, աշխատանքային պլանների հաշվետվություններ, ֆինանսական հաշվետվություններ
6.	նոթբուքի ձեռքբերում	2025 թ.	Տնօրեն/ համակարգող, հաշվապահ, օպերատոր		
7.	համակարգչի ձեռքբերում	2026 թ.	Տնօրեն/ համակարգող, հաշվապահ, օպերատոր		
8.	1 բազմաֆունկցիոնալ տպիչ սարքի ձեռքբերում	2026 թ.	Տնօրեն/ համակարգող, հաշվապահ, օպերատոր		

Հնարավոր ռիսկերը, դրանց մեղմացման կամ չեզոքացման գործողությունները	
<u>Ռիսկեր.</u> Անհրաժեշտ ֆինանսական միջոցների բացակայություն, կամ անբավարարություն:	
Ֆորս մաժորային իրավիճակներ (բնական և տեխնածին աղետներ, համավարակներ, անվտանգային իրավիճակներ և այլն)	
<u>Ռիսկերի մեղմացման գործողություններ.</u>	
Ռիսկերի կառավարման նպատակով կիրականացվեն դպրոցի ֆինանսավորման պլանավորման և արդյունավետ կառավարման աշխատանքներ	

№	Գործողությունները և միջոցառումները	Նախատեսված պատասխանատուները	Անհրաժեշտ միջոցները և նյութատեխնիկական պարագաները	Վերահսկողության մեխանիզմները
3.	Միջդպրոցական թեմատիկ աշխատանքների, մրցույթների և վիկտորինաների անցկացում: Առարկայական օլիմպիադաների և այլ մրցույթների մասնակցության խթանում	Տնօրեն, տնօրենի տեղակալ, մ/մ ղեկավարներ,	Ֆինանսական միջոցներ չեն պահանջվում, Դպրոցն ապահովված է անհրաժեշտ ուսումնատեխնիկական պարագաներով՝ ՏՀՏ առցանց հանդիպման միջոցներ և այլն:	Զարգացման ծրագրի կատարման ամենամյա հաշվետվություն, համապատասխան պլանների հաշվետվություններ, ներքին գնահատում

4.	Թեմատիկ-ուսումնական քննարկումների և սեմինարների (նաև առցանց) կազմակերպում			
5.	Դպրոց-Բուհ և դպրոց-Մուհ համագործակցության խորացում. ուսանողների ներգրավվածության խթանում և ընդլայնում	Տնօրեն, տնօրենի տեղակալ, մ/մ ղեկավարներ, համակարգող՝ կադա		

Հնարավոր ռիսկերը, դրանց մեղմացման կամ չեզոքացման գործողություններըՌիսկեր.

Աշխատանքնում ընդգրկված կողմերի ներգրավվածության շահադրդման պակաս և վերապահ մոտեցում:

Ֆորս մաժորային իրավիճակներ (բնական և տեխնածին աղետներ, համավարակներ, անվտանգային իրավիճակներ և այլն)

Ռիսկերի մեղմացման գործողություններ.

Նախատեսված աշխատանքների արդյունավետության և կարևորության հիմնավորման վերաբերյալ քննարկումների կազմակերպում:

Ֆորս մաժորային իրավիճակներում դպրոցը ըստ անհրաժեշտության կանցնի հեռավար ուսուցման, նշված աշխատանքները կկազմակերպվեն առցանց: